

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

**ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ.**

**ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ**

**№11**

**2013**

---

Գլխավոր խմբագիր՝ Գագիկ ՄԵԼԻՔՅԱՆ  
Գլխ. խմբագրի տեղակալ՝ Համլետ ԴԱՎԹՅԱՆ

Խմբագրական խորհուրդ՝

Արմեն ԱՇՈՏՅԱՆ - ԿԳ նախարար  
Սանուկ ՄԿՐՏՉՅԱՆ - ԿԳ փոխնախարար  
Արմեն ՓԱՇԱՅԱՆ - ԳԹԿ փոխտնօրեն  
Արսեն ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ - ԳԹԿ փոխտնօրեն  
Ալեքսան ԵՍԱՅԱՆ - ԳԹԿ թեստաբանության բաժնի պետ  
Կարո ՆԱՍԻԲՅԱՆ - ԳԹԿ քննությունների կազմակերպման բաժնի պետ  
Էդվարդ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ - ԳԹԿ իրավաբանական բաժնի պետ  
Համլետ ԴԱՎԹՅԱՆ - ԳԹԿ հրատարակչական բաժնի պետ  
Աշոտ ԴԱԶԱՐՈՍՅԱՆ - ԳԹԿ հրատարակչական բաժնի գլխավոր  
մասնագետ  
Գուրգեն ԽԱԶԱՏՏՅԱՆ - ԳԹԿ թեստաբանության բաժնի գլխավոր  
մասնագետ

Խմբագրական կազմ՝

Լուիզա ՄԱԹԵՎՈՍՅԱՆ  
Արմեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Խմբագրության հասցեն՝

Երևան, Այգեստան 9/4  
Հեռ. (+374 10) 553265  
E-mail: [gtk2005@web.am](mailto:gtk2005@web.am)  
[www.atc.am](http://www.atc.am)

---

## **2012 թ. նոյեմբերին**

### **ՀՀ մարզերի հանրակրթական հաստատությունների 11-րդ դասարաններում անցկացված արտաքին ընթացիկ գնահատման արդյունքները**

#### **1. Ընդհանուր տեղեկություններ**

##### **1.1. Արտաքին ընթացիկ գնահատման կազմակերպումը**

2012 թ. նոյեմբեր ամսին հանրակրթական 115 դպրոցների տասնմեկերորդ դասարաններում անցկացվել է արտաքին ընթացիկ գնահատում հայոց լեզվից և հայ գրականությունից, ինչպես նաև մաթեմատիկայից՝ ընդհանուր առմամբ 4111 աշակերտի մասնակցությամբ: Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցել են ՀՀ մարզերում հավասարաչափ բաշխված 24 ավագ, 87 միջնակարգ դպրոցի և 4 պետական վարժարանի աշակերտներ:

Գրավոր աշխատանքների տևողությունը եղել է 60 րոպե:

Արտաքին ընթացիկ գնահատումը կազմակերպվել է Գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչների կողմից, որոնք վերահսկել և ուղղորդել են գնահատման ողջ գործընթացը: Աշակերտների ինքնուրույն աշխատանքի ապահովման համար ստեղծվել են յուրաքանչյուր առարկայից թեստերի 6-ական տարբերակ:

Աշակերտների գրավոր աշխատանքները, պատասխանների ձևաթղթերի հետ միասին, տեղափոխվել են ԳԹԿ, որտեղ կարճ և ընդարձակ պատասխանով առաջադրանքները առարկայական մասնագետների կողմից ստուգվելուց հետո՝ ենթարկվել են համակարգչային ստուգման:

## 1.2. Թեստերի կառուցվածքը և սանդղակավորումը

Բովանդակային առումով՝ թեստերը կազմվել են 10-րդ դասարանի, ինչպես նաև 11-րդ դասարանի սեպտեմբեր ամսին ուսումնասիրված համապատասխան առարկայական ծրագրերի նյութի շրջանակներում:

Արտաքին գնահատման թեստերը բաղկացած են եղել 20-ական առաջադրանքներից: Հայոց լեզվի և հայ գրականության թեստային առաջադրանքներից 10-ը (1-8-րդ, 17-րդ, 18-րդ առաջադրանքները) եղել են «Հայոց լեզու», 10-ը (9-16-րդ, 19-րդ, 20-րդ առաջադրանքները)՝ «Հայ գրականություն» առարկաներից, մաթեմատիկայի թեստային առաջադրանքներից 12-ը (1-10-րդ, 14-րդ, 15-րդ առաջադրանքները)՝ «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» (այսուհետև՝ «Հանրահաշիվ»), 8-ը (11-13-րդ, 16-20-րդ առաջադրանքները)՝ «Երկրաչափություն» առարկաներից: Բոլոր առաջադրանքները գնահատվել են 0 կամ 1 միավորներով, բացի երկրաչափության 18-րդ և 20-րդ առաջադրանքներից, որոնք գնահատվել են 0 կամ 2 միավորներով:

Թեստային միավորներից գնահատման 10 միավորանոց համակարգին անցումը կատարվել է համաձայն ստորև բերված սանդղակների.

Հայոց լեզու Հայ գրականություն Երկրաչափություն		Հանրահաշիվ	
Միավորը	Գնահատականը	Միավորը	Գնահատականը
0-1	1	0-1	1
2	2	2	2
3	3	3	3
4	4	4	4
5	5	5	5
6	6	6	6
7	7	7-8	7
8	8	9-10	8
9	9	11	9
10	10	12	10

Նշված չորս առարկաների արդյունքները 10-միավորանոց համակարգով տրվել են համապատասխան ուսումնական հաստատություններին, որոնք այդ արդյունքները գրանցել են իրենց դասամատյաններում:


## 2. Վիճակագրական տվյալներ արտաքին ընթացիկ գնահատման արդյունքների վերաբերյալ

### 2.1. Արտաքին ընթացիկ գնահատման միջին միավորներն ըստ առարկաների

Առարկան	Մասնակիցների թիվը	Միջին միավորը
Հայոց լեզու	3850	4,3
Հայ գրականություն	3850	3,7
Հանրահաշիվ	3821	4,3
Երկրաչափություն	3821	1,9

Միջին միավորները ստանդարտ միջինից (5,5-ից) ցածր են եղել, ընդ որում՝ հայ գրականության և երկրաչափության միջին միավորները չեն հասել դրական միավորների շեմին:

### 2.2. Գնահատականների բաշխման տոկոսներն՝ ըստ առարկաների



Հայոց լեզվից և հայ գրականությունից դրական միավորների շեմը չեն հաղթահարել մասնակիցների համապատասխանաբար 34 և 47

տոկոսը, հանրահաշվից և երկրաչափությունից՝ համապատասխանաբար 41 և 88 տոկոսը:

Հայոց լեզվից աշակերտների 38%-ը ստացել է 4-5 գնահատական, 27%-ը՝ 6-8 գնահատական, 1%-ը՝ 9-10 գնահատական:


Հայ գրականությունից աշակերտների առաջադիմությունն ավելի ցածր է եղել, քան հայոց լեզվից, քանի որ դրական միավորների շեմը հաղթահարել են 13 տոկոսով պակաս աշակերտներ, նրանց մեծամասնությունը (34%-ը) ստացել է 4-5 գնահատական, 18%-ը՝ 6-8 գնահատական, 0,7%-ը՝ 9-10 գնահատական:

Հանրահաշվի միջին միավորը նույնն է եղել, ինչ հայոց լեզվի միջին միավորը, սակայն տարբեր են եղել միավորների բաշխումները. հանրահաշվից դրական միավորների շեմը չհաղթահարած աշակերտները 7 տոկոսով ավելի են եղել, մինչև ժամանակ 5 տոկոսով ավելի են եղել 6-10 գնահատական ստացողները:

Արտաքին գնահատման չորս առարկաներից ամենացածր արդյունքներ գրանցվել են երկրաչափությունից. 6,4%-ը ստացել է 4-5 գնահատական, 4,2%-ը՝ 6-8 գնահատական, 1,3%-ը՝ 9-10 գնահատական:


### 2.3. Արտաքին ընթացիկ գնահատման ընտրանքը

Արտաքին ընթացիկ գնահատման ընտրանքը կատարվել է այնպես, որ մասնակիցները համաչափ բաշխված լինեն միջնակարգ և ավագ դպրոցների միջև. մասնակիցների 53 տոկոսը ավագ, 44 տոկոսը՝ միջնակարգ դպրոցներից են, 4 տոկոսը՝ վարժարաններից: Վարժարանների աշակերտների տոկոսը փոքր է, քանի որ վարժարանները ՀՀ-ում շատ չեն:




## 2.4. Արտաքին գնահատման միջին միավորներն ըստ դպրոցների տիպերի

Արտաքին գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ համեմատաբար լավ առաջադիմություն հանդես են բերել ավագ, այնուհետև՝ միջնակարգ դպրոցների, և վերջում՝ վարժարանների աշակերտները: Ավագ դպրոցի միջին միավորները 0,5-1,1 միավորով



բարձր են եղել միջնակարգ դպրոցների և վարժարանների միջին միավորներից: Այս երեք տիպի դպրոցները միմյանցից տարբերվել են ոչ միայն միջին միավորներով, այլև միավորների բաշխմամբ: Ստորև ներկայացվում են միավորների բաշխման տոկոսներն ըստ առարկաների.




Ավագ դպրոցներում համեմատաբար քիչ են եղել 1-3 գնահատականները, համեմատաբար շատ՝ 6-8 գնահատականները, իսկ 9-10 գնահատականները զրանցվել են հիմնականում ավագ, ավելի պակաս՝ միջնակարգ դպրոցներում: Վարժարաններում 9-10

գնահատականներ չեն եղել, 6-8 գնահատականները կազմել են մյուս տիպի դպրոցների համեմատությամբ ամենափոքր տոկոսը:

**2.5. Ավագ դպրոցների 2011 թ. և 2012 թ. արտաքին ընթացիկ գնահատման արդյունքների համեմատությունը**

2011 թ.. հոկտեմբերի արտաքին ընթացիկ գնահատումն անցկացվել է միայն ավագ դպրոցներում, իսկ 2012 թ.-ին՝ միայն մարզերում, այդ պատճառով 2012 թ. և 2011 թ. արտաքին ընթացիկ գնահատման արդյունքների համեմատությունը կատարվել է մարզերի ավագ դպրոցների արդյունքների հիման վրա:

Դիագրամից պարզ է դառնում, որ 2012 թ. հայոց լեզվի և հայ գրականության միջին միավորը 2011 թ. համեմատությամբ նվազել է 0,5-ով, մաթեմատիկայինը՝ 0,8-ով: Փոխարենը 2012 թ. ավելացել են բարձր գնահատականներ ստացած աշակերտները. 9-10 գնահատական հայոց լեզվից և հայ գրականությունից ստացել է 40, մաթեմատիկայից՝ 101 աշակերտ, մինչդեռ 2011 թ.-ին մարզերում հայոց լեզվից և հայ գրականությունից 9-10 գնահատական ստացել է 2, մաթեմատիկայից՝ 1 աշակերտ: Թեև 6-8 գնահատականները հայոց լեզվից և հայ գրականությունից 2012 թ.-ին նվազել են 5%-ով (2011 թ.-ին՝ 32%, 2012 թ.-ին՝ 27%), սակայն մաթեմատիկայի 6-8 գնահատականները 2011 թ.-ի 16%-ի համեմատությամբ աճել են մինչև 21%:



2012 թ. ավագ դպրոցների միջին միավորները 2011 թ. համեմատությամբ նվազել են 0,5-0,8-ով: Դրան նպաստել են.


- թեստի 6 տարբերակով գնահատման անցկացումը, որը նվազեցնում է արտագրելու հնարավորությունը (2011 թ. արտաքին գնահատումն անցկացվել է 2 տարբերակով),
- մաթեմատիկայի թեստերում կարճ պատասխանով առաջադրանքների թվի մեծացումը (2012 թ.-ին մաթեմատիկայի թեստերում կարճ պատասխանով առաջադրանքները 12,5 տոկոսով ավելի են եղել 2011 թ.-ի թեստերի համեմատությամբ):



### 3. Արտաքին ընթացիկ գնահատման և ներքին գնահատման արդյունքների համեմատություն

#### 3.1. 2011-12 ուստարվա 10-րդ դասարանի ներքին գնահատումը


Տվյալների բազա մուտքագրվել են արտաքին գնահատման մասնակից 11-րդ դասարանի 3528 աշակերտի «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաների, ինչպես նաև 3359 աշակերտի «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» և «Երկրաչափություն» առարկաների նախորդ՝ 2011-12 ուստարվա տարեկան գնահատականները: Ստորև ներկայացվում են նշված առարկաների տարեկան գնահատականների բաշխման հիստոգրամները:



Հիստոգրամներից պարզ է դառնում, որ ներքին գնահատման համար 10 միավորանոց սանդղակի փոխարեն կիրառվել են 4-ից 10 գնահատականները՝ հայոց լեզվի և հայ գրականության, 3-ից 10 գնահատականները՝ մաթեմատիկայի դեպքում: Հայոց լեզվի 4-9

գնահատականները բաշխված են եղել համաչափ, հայ գրականության գնահատականներից գերակշռողը եղել է 9-ը (աշակերտների 22%-ը): Մաթեմատիկայի գնահատականներից գերակշռողը եղել է 4-ը (աշակերտների 23%-ը՝ հանրահաշվից, 25%-ը՝ երկրաչափությունից), 3 գնահատական ստացել է աշակերտների 1%-ը, 9 գնահատական՝ 15%-ը, 10 գնահատական՝ 1%-ը:

### 3.2. Արտաքին և ներքին գնահատման արդյունքները




Ներքին գնահատման միջին միավորները բարձր են եղել արտաքին գնահատման միջիններից՝ հայոց լեզվինը՝ 2,4-ով, հայ գրականությանը՝ 3-ով, հանրահաշվինը՝ 1,9-ով, երկրաչափությանը՝ 4,2-ով: Բնական է, որ ներքին գնահատման միջին միավորները բարձր են արտաքին գնահատման միջին միավոր-

ներից, քանի որ.

- արտաքին գնահատումն անցկացվել է 6 տարբերակով, որը նվազեցրել է արտագրելու հնարավորությունը,
- ներքին գնահատման 10 միավորանոց համակարգը արհեստականորեն կրճատվել է, և ամենացածր գնահատականը դարձել է 3-ը, մինչդեռ արտաքին գնահատման դեպքում կիրառվել են 1-ից 10 գնահատականները,
- ներքին գնահատումը հնարավորություն ունի կիրառելու բազմակողմանի գնահատման ձևեր, մինչդեռ արտաքին գնահատման հնարավորությունները սուղ են,
- ներքին գնահատման մեջ մեծ է սուբյեկտիվ գործոնի ազդեցությունը:

### 3.3. Արտաքին և ներքին գնահատման արդյունքների դինամիկան


Ինչպես նշվել է վերևում, 2012 թ. և նախորդ տարվա արտաքին գնահատման արդյունքների համեմատությունը հավաստի է ավագ դպրոցների շրջանում: 2011 թ. ընթացիկ արտաքին և ներքին գնահատումների միջին միավորների տարբերությունը կազմել է 1,1-1,2 միավոր: Դիագրամի տվյալների համաձայն՝ 2012 թ. ներքին գնահատման միջին միավորները բարձրացել են 0,6-0,7-ով, իսկ արտաքին գնահատման միջին միավորները նվազել են 0,5-0,8 միավորով: Արդյունքում՝ 2012 թ. արտաքին և ներքին գնահատումների միջին միավորների տարբերությունը կազմել է 2,7-2,9 միավոր:




## 4. Արտաքին ընթացիկ գնահատման արդյունքներն ըստ հոսքերի

### 4.1. Սովորողների բաշխվածությունն ըստ հոսքերի

Դիագրամը ներկայացնում է արտաքին ընթացիկ գնահատման մասնակից դպրոցների 11-րդ դասարանում սովորողների բաշխման տոկոսները՝ ըստ հոսքերի: Միջնակարգ դպրոցում ուսուցումն իրականացվում է միայն ընդհանուր հոսքի ծրագրերով: Մյուս հոսքերը գործում են ավագ դպրոցներում ու վարժարաններում: Պարզվում է, որ ընտրելու հնարավորության դեպքում աշակերտները գերապատվությունը տալիս են հումանիտար հոսքին, այնուհետև բնագիտական և հումանիտար հոսքերին:



## 4.2. Միջին միավորներն ըստ հոսքերի





Ամենաբարձր միջին միավորները գրանցվել են տնտեսագիտական (հայոց լեզու՝ 5,3, հայ գրականություն՝ 4,5, հանրահաշիվ՝ 6,3, երկրաչափություն՝ 3,4), այնուհետև ֆիզմաթ (միջին միավորները տնտեսագիտականից 0,3-0,5-ով պակաս) և բնագիտական (միջին միավորները տնտեսագիտականից 0,5-1,1-ով պակաս) հոսքերում: Հումանիտար հոսքում մաթեմատիկայի արդյունքները ընդհանուր միջինից ցածր են, իսկ հայոց լեզվի և հայ գրականության արդյունքներով այս հոսքը զիջում է ֆիզմաթ և տնտեսագիտական հոսքերին:

Ամենացածր միջին միավորներ գրանցվել են միջնակարգ դպրոցի ընդհանուր ծրագիրն անցնող աշակերտների մոտ, որոնց միջին միավորները 0,1-0,3-ով պակաս են ավագ դպրոցի և վարժարանի ընդհանուր, ինչպես նաև հումանիտար հոսքերի միջին միավորներից:

## 5. Արտաքին գնահատման արդյունքներն ըստ մարզերի

Ստորև բերված դիագրամներում հոծ գծով ներկայացված են հանրահաշվի և հայոց լեզվի միջին միավորները, գծիկավոր գծով՝ երկրաչափության և հայ գրականության միջին միավորները:




Բոլոր առարկաներից բարձր առաջադիմություն ցուցաբերել են Սյունիքի մարզի աշակերտները, որոնց միջին միավորները հայոց լեզվից և հայ գրականությունից գերազանցել են ընդհանուր միջինը 15 տոկոսով, հանրահաշվից՝ 30 տոկոսով, երկրաչափությունից՝ 46 տոկոսով: Հաջորդը՝ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի աշակերտներն են, որոնց միջին միավորները գերազանցել են ընդհանուր միջինը համապատասխանաբար 4-10 և 4-8 տոկոսներով: Տավուշի մարզի աշակերտների առաջադիմության ցուցանիշները ընդհանուր միջինից բարձր են եղել հայոց լեզվից և հայ գրականությունից՝ 6-12 տոկոսով, մինչդեռ մաթեմատիկայից Տավուշի աշակերտներն ունեցել են միջինից ցածր առաջադիմություն: Մյուս մարզերի աշակերտների առաջադիմությունը մոտ կամ ցածր է ընդհանուր միջինից:

## 6. Միջին միավորներն ըստ սեռերի


Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած դպրոցների 11-րդ դասարանի աշակերտների 54%-ը եղել է աղջիկ, 46%-ը՝ տղա:

Ըստ սեռերի վերլուծությունը ցույց է տվել, որ աղջիկների միջին միավորները բոլոր առարկաներից գերազանցել են տղաների միջին միավորները՝ հայոց լեզվի և հայ գրականության դեպքում՝ 0,8-ով, մաթեմատիկայի դեպքում՝ 0,1-ով: Նույնը վերաբերում է նաև 9-10 գնահատականներին. 9-10 գնահատական ստացած աղջիկների թիվը հայոց լեզվից և հայ գրականությունից՝ 22-ով, մաթեմատիկայից՝ 7-ով, մեծ է եղել տղաների թվից:



## 7. Վերլուծություն ըստ բնակավայրի տիպերի

Ըստ բնակավայրի տիպերի վերլուծությունը ցույց է տվել, որ միջին քաղաքների աշակերտների միջին միավորներն ամենաբարձրն են, և ինչքան հեռանում է բնակավայրը դեպի փոքր քաղաքներ, գյուղեր, այնքան միջին միավորները փոքր են: Խոշոր քաղաքների միջին միավորները մոտ են եղել գյուղերի միջին միավորներին:



Հուսադրող է այն, որ սահմանամերձ և հեռավոր գյուղերի աշակերտները, ինչպես նաև նախորդ արտաքին գնահատումների ժամանակ, հանդես են բերել մյուսներից ավելի բարձր առաջադիմություն՝ հատկապես հայ գրականությունից և հանրահաշիվից:

## 8. Արտաքին գնահատման արդյունքներն ըստ դպրոցների

Արտաքին գնահատմանը մասնակցել է 115 հանրակրթական ուսումնական հաստատություն:

Հայոց լեզվից բարձր առաջադիմություն հանդես են բերել 27, հայ գրականությունից՝ 21, հանրահաշվից՝ 32, երկրաչափությունից՝ 1 դպրոցի աշակերտներ, որոնց միջին միավորները 10 և ավելի տոկոսով գերազանցել են ընդհանուր միջին միավորը: Միջին առաջադիմություն ունեցել են հայոց լեզվից՝ 37, հայ գրականությունից՝ 16, հանրահաշվից՝ 27, երկրաչափությունից՝ 2 դպրոցի աշակերտներ: Հայոց լեզվից՝ 51, հայ գրականությունից՝ 78, հանրահաշվից՝ 56, երկրաչափությունից՝ 112 դպրոցի միջին միավորները չեն հասել դրական միավորների շեմին՝ 4-ին:

## 9. Վերլուծություն ըստ դասարանի աշակերտների թվի

Հայտնի է, որ հանրակրթական դպրոցների 11-րդ դասարանները կոմպլեկտավորվում են մինչև 30 աշակերտներով: Հաշվարկվել է աշակերտների թվով փոքր, միջին և մեծ դասարանների միջին միավորներն ըստ առարկաների:

Առարկան	6-15 աշակերտ ունեցող դասարանների միջին միավորը	16-20 աշակերտ ունեցող դասարանների միջին միավորը	21-25 աշակերտ ունեցող դասարանների միջին միավորը	26-30 աշակերտ ունեցող դասարանների միջին միավորը
Հայոց լեզու	4.1	4.3	4.5	4.1
Հայ գրականություն	3.7	3.7	3.7	3.8
Հանրահաշիվ	4.4	4.0	4.8	4.3
Երկրաչափություն	1.9	1.8	2.1	1.8

Աղյուսակից պարզվում է, որ ըստ առարկաների միջին միավորներն ունեն փոքր տարբերություններ՝ կախված դասարանի աշակերտների թվից: Սակայն աղյուսակում առկա է մի օրինաչափություն՝ առավելագույն միջին միավորը գրանցվել է 21-25 հոգանոց դասարաններում:

## 10. Թեստեր և թեստային առաջադրանքներ

### 10.1. Աշակերտների պատասխաններն ըստ առաջադրանքների տիպերի և ծրագրային թեմաների

Հայոց լեզվի և հայ գրականության թեստերի 20 առաջադրանքներից 16-ը եղել են ընտրովի պատասխանով, 4-ը՝ կարճ պատասխանով առաջադրանքներ: Ընտրովի պատասխանով առաջադրանքները աշակերտների կողմից ավելի հեշտ հաղթահարելի են եղել (բարդության գործակիցը՝ 0.37-0.61), քան կարճ պատասխանով առաջադրանքները (բարդության գործակիցը՝ 0.08-0.33): Կարճ պատասխանով առաջադրանքներից երկուսը եղել են հայոց լեզվից, երկուսը՝ գրականությունից: Աշակերտների 0-9 տոկոսն է պատասխանել հայոց լեզվի այն առաջադրանքներին, որոնք վերաբերել են գ-կ-ք, ն-մ, երկհնչյունների ուղղագրությանը, բառերի միասին, անջատ, գծիկով գրության թեմաներին: Գրականությունից կարճ պատասխանների արդյունքները ցույց են տվել, որ աշակերտների 83-96 տոկոսը Ս. Խորենացու, Բաբելոնի, Խ. Աբովյանի ստեղծագործություններին ծանոթ չեն, հանձնարարված գրականությունը չեն կարդացել, չգիտեն, թե որ ստեղծագործությունից է տրված հատվածը, ովքեր են հերոսները:

Մաթեմատիկայի թեստերի 20 առաջադրանքներից 13-ը եղել են ընտրովի պատասխանով, 7-ը՝ կարճ պատասխանով առաջադրանքներ: Ընտրովի պատասխանով առաջադրանքները ճիշտ է նշել աշակերտների 28-44 տոկոսը, կարճ պատասխանով առաջադրանքները՝ 9-28 տոկոսը: Կարճ պատասխանով առաջադրանքները եղել են եռանկյունաչափական ֆունկցիայի մեծագույն արժեքը գտնելու, ցուցչային պարզագույն հավասարում լուծելու, ուղղանկյունանիստին և զլանին տարված հատույթներ կառուցելու, ինչպես նաև հատույթների վերաբերյալ հաշվարկներ կատարելու խնդիրներ: Աշակերտները դժվարացել են գտնել նաև հայտնի կողմերով ուղղանկյունանիստի կողմնային կողի՝ անկյունագծային հատույթից ունեցած հեռավորությունը: Մրանք թեմաներ են, որոնք հատկապես ուշադրության արժանի են մաթեմատիկայի ուսուցիչների շրջանում:



## 10.2. Թեստերի և թեստային առաջադրանքների որակական բնութագրիչները (բարդության գործակից<sup>1</sup>, հուսալիություն<sup>2</sup>...)

Բազմակողմանի և հանգամանալից վերլուծության են ենթարկվել 11-րդ դասարանի «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաների ընթացիկ գնահատման թեստերը, ընդհանուր առմամբ՝ 12 թեստ և 240 թեստային առաջադրանք: Արտաքին ընթացիկ գնահատման թեստերն ունեցել են միջին բարդություն (հայոց լեզվի և հայ գրականության թեստերի բարդության գործակիցը՝ 0,40, մաթեմատիկայինը՝ 0,30), միջին հուսալիություն (հայոց լեզվի և հայ գրականության թեստերի հուսալիության գործակիցը՝ 0,70, մաթեմատիկայինը՝ 0,80):

Ըստ որակական բնութագրիչների (բարդություն, տարբերակում, կորեյացիա) վերլուծության են ենթարկվել նաև թեստային առաջադրանքները, որոնք որակական բնութագրիչների հիման վրա դասակարգվել են որպես լավ, միջին և վատ առաջադրանքներ: Լավ առաջադրանքները ունեն լավ բնութագրիչներ և պիտանի են հետագա օգտագործման համար, միջին առաջադրանքները պիտանի են օգտագործման համար միայն բարելավումից հետո, վատ առաջադրանքները նպատակահարմար չեն հետագա օգտագործման համար:

Թեստերի և թեստային առաջադրանքների վերլուծության հիման վրա առարկայական մասնագետները բարելավել են թեստերը:

## 10.3. Վերլուծությունը ըստ թեստային առաջադրանքների բովանդակության

Վերլուծության են ենթարկվել արտաքին գնահատման թեստերը՝ ելնելով թեստային առաջադրանքների նշանակությունից. դրանք դասակարգվել են որպես մտապահման, կիրառման և հիմնավորման առաջադրանքներ: Մաթեմատիկայի թեստերը կազմված են եղել 6 մտապահման, 10 կիրառման, 4 հիմնավորման, հայոց լեզվի և հայ

<sup>1</sup> Առաջադրանքը համարվում է բարդ՝ բարդության գործակիցի՝  $P$ -ի 0,2-ից փոքր լինելու, միջին բարդության՝  $0,2 < P < 0,8$ , հեշտ՝  $P \geq 0,80$  դեպքերում:

<sup>2</sup> Հուսալիության գործակիցի՝ 0,7-ից մինչև 0,8 ընդունած արժեքների դեպքում թեստի հուսալիությունը համարվում է միջին, 0,8-ից մինչև 0,9 արժեքների դեպքում՝ ընդունելի, 0,9-ից մեծ արժեքների դեպքում՝ մեծ:

գրականության թեստերը՝ 15 մտապահման և 5 կիրառման առաջադրանքներից: Ստորև ներկայացված են աշակերտների պատասխանների տոկոսները՝ առաջադրանքների խմբերին համապատասխան.

Առարկան	Մտապահում	Կիրառում	Հիմնավորում
Մաթեմատիկա	40%	29%	11%
Հայոց լեզու և հայ գրականություն	37%	49%	-

Պարզվել է, որ մաթեմատիկայի ուսուցումը դպրոցներում ուղղված է առավելապես մտապահմանը, ավելի քիչ՝ կիրառմանը և հիմնավորմանը, մինչդեռ հայոց լեզվի և հայ գրականության ուսուցման մեջ գիտելիքների կիրառմանը հատկացվել է համապատասխան ուշադրություն:

### Եզրակացություն

2012 թ. նոյեմբեր ամսին ՀՀ մարզերի հանրակրթական 115 դպրոցների տասնմեկերորդ դասարաններում անցկացված արտաքին ընթացիկ գնահատման նպատակն է եղել հետազոտել 11-րդ դասարանում նշված առարկաներից սովորողների արդյունքները, պարզել նրանց առաջադիմության դինամիկան՝ 2011-2012 ուստարվա 10-րդ դասարանի ներքին (տարեկան) գնահատման համեմատությամբ, ուսումնասիրել արտաքին ընթացիկ գնահատման արդյունքներն ըստ սովորողների տարբեր խմբերի (դպրոցի տիպերի, մարզերի, սեռերի և այլն):

Արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների հաշվառումը ցույց է տվել, որ բացակայությունները կազմել են 7-8 տոկոս, որը նորմայի սահմաններում է:

#### • Արտաքին գնահատման ընդհանուր արդյունքները

Ընթացիկ գնահատման թեստերի կառուցվածքը հնարավորություն է տվել գնահատելու աշակերտների գիտելիքները հայոց լեզվից, հայ գրականությունից, հանրահաշվից և երկրաչափությունից:

Նշված առարկաների արդյունքների ուսումնասիրությունը պարզել է, որ ընդհանուր առմամբ աշակերտների առաջադիմությունը եղել է միջինից ցածր: Միջին միավորները եղել են հայոց լեզվից՝ 4,3, հայ գրականությունից՝ 3,7, հանրահաշվից՝ 4,3, երկրաչափությունից՝ 1,9: Պետք է նշել, որ թեստերը կազմվել են ընդհանուր հոսքի առարկայական

ծրագրերին համապատասխան, գնահատումն անցկացվել է աշակերտներին ծանոթ իրավիճակում (իրենց դասարանում), աշակերտների համար կազմակերպիչների կողմից ապահովվել է թեստերի վրա լիարժեք աշխատելու համար հանգիստ, խաղաղ մթնոլորտ:

- **Հայոց լեզվի և հայ գրականության արդյունքները**

Հայոց լեզվից աշակերտներին առաջադիմությունը 3 տոկոսով է գերազանցել դրական միավորների շեմը: Աշակերտների 91 տոկոսի կողմից լավ չեն յուրացվել ուղղագրությանը վերաբերող թեմաները: Մյուս թեմաներին վերաբերող առաջադարանքներին պատասխանել է մասնակիցների 23-82 տոկոսը:

Հայ գրականությունից աշակերտներին առաջադիմությունն ավելի ցածր է եղել, քան հայոց լեզվից: Աշակերտների համար դժվար հաղթահարելի են եղել հատկապես հայ գրականության այն հարցերը, որոնք առնչվել են Մ. Խորենացու, Րաֆֆու, Խ. Աբովյանի ստեղծագործություններին:

Վերոնշյալը վկայում է հայոց լեզվի և հայ գրականության ուսուցման մեջ առկա մի շարք խնդիրների մասին՝ կապված համապատասխան թեմաների դասավանդման հետ:

- **Մաթեմատիկայի արդյունքները**

Հանրահաշվի միջին միավորը ընդամենը 3 տոկոսով է բարձր առաջին դրական միավորից, ընդ որում՝ աշակերտների 41 տոկոսը չի հաղթահարել դրական միավորների շեմը: Դժվար հաղթահարելի են եղել տրված ֆունկցիայի հակադարձ ֆունկցիան,  $y = 3 - \sin^2 x$  տիպի եռանկյունաչափական ֆունկցիայի մեծագույն արժեքը գտնելու, ինչպես նաև պարաբոլի գուգահեռ տեղափոխության վերաբերյալ առաջադրանքները:

Երկրաչափության արդյունքները ցույց են տալիս, որ ուշադրության արժանի են հատկապես ուղիղների և հարթությունների ուղղահայացության, տարածական պատկերների հատույթների կառուցման և դրանց վերաբերյալ խնդիրների լուծման թեմաները: Դրական միավորների շեմը չհաղթահարած 88 տոկոս աշակերտների առկայությունը և ցածր միջին միավորը փաստում են, որ այս առարկայի ուսուցումը լրացուցիչ հետազոտման կարիք ունի:

- **Ներքին գնահատում**

Արտաքին գնահատման թեստերը կազմված են եղել 10-րդ դասարանի, ինչպես նաև 11-րդ դասարանի սեպտեմբերի ծրագրային նյութին վերաբերող առաջադրանքներից: Արտաքին և ներքին գնահատումների արդյունքները համադրելու համար ստեղծվել է տվյալների բազա, որը պարունակել է արտաքին գնահատման մասնակից աշակերտների 10-րդ դասարանի տարեկան գնահատականները՝ համապատասխան առարկաներից:

Օրինաչափ է համարվում այն, որ ներքին գնահատման արդյունքները բարձր են արտաքին գնահատման արդյունքներից, քանի որ արտաքին և ներքին գնահատումների միջին միավորների տարբերությունը պայմանավորված է ներքին գնահատման ձևերի ու մեթոդների բազմազանությամբ, սուբյեկտիվ գործոնի առկայությամբ, գնահատականի՝ որպես խրախուսման միջոց կիրառությամբ: Բացի այդ, ինչպես նշվել է վերևում, ներքին գնահատման համար 10 միավորանոց սանդղակի փոխարեն կիրառվել են 4-ից 10 (հայոց լեզու և հայ գրականություն) կամ 3-ից 10 (մաթեմատիկա) գնահատականները, մինչդեռ արտաքին գնահատման դեպքում կիրառվում են 1-ից 10 գնահատականները: 3-ից 10 գնահատականներով սանդղակի ստանդարտ միջինը 6,5-ն է, 1-10 գնահատականներով սանդղակի ստանդարտ միջինը՝ 5,5-ը, այստեղից էլ՝ միջին միավորների տարբերությունները:

Հարկ է նշել, որ 2012 թ. ներքին և արտաքին գնահատումների միջին միավորների տարբերությունը 2 միավորից բարձր է եղել:

- **ՀՀ մարզերի ավագ դպրոցներում սովորողների առաջադիմության դինամիկան**

Նկատի ունենալով այն, որ 2011 թ. 11-րդ դասարանի արտաքին ընթացիկ գնահատումն անցկացվել է միայն ավագ դպրոցներում՝ 2012 թ. և 2011 թ. արտաքին ընթացիկ գնահատման արդյունքների համեմատությունը կատարվել է մարզերի ավագ դպրոցների արդյունքների հիման վրա: Համեմատությունը ցույց է տվել, որ հայոց լեզվի և հայ գրականության միջին միավորը նվազել է 0,5, մաթեմատիկայինը՝ 0,8 միավորով, այսինքն՝ մեծացել է դրական միավորները չհաղթահարած և 4-5 գնահատված աշակերտների տոկոսը: Այդուհանդերձ, մեծացել է 9-10 գնահատական, ինչպես նաև մաթեմատիկայից 6-8 գնահատական ստացած աշակերտների թիվը: Սա նշանակում է, որ ուժեղ աշակերտները սկսել են պարապել կրկնուսույցի մոտ, կամ ուսուցիչն աշխատել է հիմնականում աշակերտների փոքր

խմբի հետ, իսկ դասարանի մյուս աշակերտները պասիվ մասնակցություն են ունեցել դասապրոցեսին:

- **Արդյունքներն ըստ հոսքերի**

Ըստ հոսքերի վերլուծությունը ցույց է տվել, որ բոլոր առարկաներից առաջադիմության ցուցանիշները ընդհանուր միջին միավորներից բարձր են եղել տնտեսագիտական (19-78%-ով), ֆիզմաթ (11-62%-ով) և բնագիտական (11-33%-ով) հոսքերում: Թեև արտաքին գնահատման թեստերը կազմվել են ընդհանուր հոսքի առարկայական ծրագրերին համապատասխան, ցածր առաջադիմությամբ հանդես են եկել միջնակարգ և ավագ դպրոցների ընդհանուր հոսքի աշակերտները: Ցածր առաջադիմություն են ցուցաբերել նաև հումանիտար հոսքի աշակերտները մաթեմատիկայից: Միջնակարգ և ավագ դպրոցների ընդհանուր հոսքերում դրական միավորների շեմը չի հաղթահարել աշակերտների 42-54%-ը, հումանիտար հոսքում՝ մաթեմատիկայից՝ 47-91%-ը: Համապատասխան հոսքերում պրոֆիլային առարկաներից անբավարար գնահատականների մեծ տոկոսը (ֆիզմաթ և տնտեսագիտական հոսքերում մաթեմատիկայից՝ 37,5%, հումանիտար հոսքում՝ հայոց լեզվից և հայ գրականությունից՝ 31%) վկայում է աշակերտների ոչ ճիշտ մասնագիտական կողմնորոշման մասին:

- **Վերլուծություն ըստ մարզերի**

Բոլոր առարկաներից ամենաբարձր միջին միավորներով հանդես են եկել Սյունիքի մարզի աշակերտները (հայոց լեզվի միջին միավորը՝ 5, հայ գրականությանը՝ 4,3, հանրահաշվինը՝ 5,6, երկրաչափությանը՝ 2,8), այնուհետև Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի աշակերտները, որոնց միջին միավորները 0,2-0,9-ով ցածր են եղել Սյունիքի աշակերտների միջին միավորներից: Տավուշի մարզի աշակերտների հայոց լեզվի և հայ գրականության միջին միավորները նույնպես բարձր են եղել ընդհանուր միջին միավորներից: Մյուս մարզերի աշակերտների առաջադիմությունը եղել է միջին կամ միջինից ցածր:

- **Վերլուծություն ըստ առաջադրանքների բովանդակության**

2004 թ.-ին կրթության մեջ ռազմավարական որոշում է կայացվել՝ հանրակրթությունը ծառայեցնելու ոչ միայն գիտելիքներ ուսուցանելուն, այլև այդ գիտելիքները կյանքում կիրառելու կարողությունների ու հմտությունների զարգացմանը<sup>3</sup>: Արտաքին ընթացիկ գնահատման թեստերի վերլուծությունն ըստ աշակերտների ստացած գիտելիքների

<sup>3</sup> Հանրակրթության պետական կրթակարգ, Անտարես, 2004թ.

մտապահման, կիրառության և հիմնավորման, ցույց է տվել, որ աշակերտների 40%-ը մտապահում է, 29%-ը՝ կարողանում կիրառել և միայն 11%-ն է կարողանում հիմնավորել մաթեմատիկայից ստացած գիտելիքները: Հայոց լեզվի և հայ գրականության դեպքում՝ մտապահում է 37%-ը, կիրառել կարողանում՝ 49%-ը:

- **Վերլուծություն ըստ դասարանի աշակերտների թվի**

Ըստ դասարանի աշակերտների թվի վերլուծությունից պարզվել է, որ առավել արդյունավետ են այն դասարանները, որտեղ աշակերտների թիվն ընկած է 21-25 սահմաններում:

- **Վերլուծություն ըստ բնակավայրի տիպերի**

Ըստ բնակավայրի տիպերի վերլուծությունը, ինչպես և նախորդ բոլոր արտաքին գնահատման արդյունքներում, ցույց է տվել, որ միջին քաղաքների աշակերտների միջին միավորներն ամենաբարձրն են, և ինչքան հեռանում է բնակավայրը դեպի փոքր քաղաքներ, գյուղեր, այնքան միջին միավորները բարձր են: Բազմաթիվ աշակերտների համար փոքրանում են նաև հավասար որակյալ կրթություն ստանալու հնարավորությունները:

Վերլուծությունը կատարել են

**Նարինե ԲՍՅԱԹՅԱՆԸ**

ԳԹԿ թեստաբանության բաժնի գլխավոր  
մասնագետ,

**Ալինա ՄԱՐԳԱՐՅԱՆԸ,**

ԳԹԿ համակարգչային և վերլուծական  
աշխատանքների բաժնի առաջատար  
մասնագետ,

**Նարե ՄԱՐԳՍՅԱՆԸ**

ԳԹԿ համակարգչային և վերլուծական  
աշխատանքների բաժնի առաջին կարգի  
մասնագետ

---

**<<Շտեմարանները թեստային առաջադրանքների  
բազաներ են>>**

*Այս տարի երկրորդ անգամ են հրատարակվում պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարաններ: Անցյալ տարի լույս էին տեսել միայն «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաների, իսկ այս տարի՝ բոլոր քննական առարկաների շտեմարանները: Դրանց մի մասը, հատկապես հայոց լեզվի և հայ գրականության, ինչպես նաև անգլերենի շտեմարանները մամուլում և հեռուստատեսային հաղորդումներում բուռն քննարկումների առարկա դարձան:*

*Շտեմարանների վերաբերյալ Գնահատման և թեստավորման կենտրոնին մշտապես տարաբնույթ հարցեր են ուղղվում (ԳԹԿ կայքէջի, համացանցի սոցիալական ցանցերի, հեռախոսագանգերի միջոցով և այլն), որոնց մեջ հաճախակի կրկնվողներին խնդրեցինք պատասխանել ԳԹԿ արտաքին համագործակցության բաժնի պետ Արայիկ ԻՍՊԻՆՅԱՆԻՆ:*

**Հարց:** Ինչո՞ւ ստեղծվեցին շտեմարանները:

**Պատասխան:** Շտեմարանները ստեղծվեցին ԿԳ նախարարության կողմից մշակված կրթական քաղաքականության հիման վրա և ԿԳ նախարարության առաջարկով: Ցանկանում եմ հիշեցնել, որ տարբեր տարիների ավարտական և միասնական քննությունների թեստերի մեջ ինչ-ինչ պատճառներով տեղ էին գտնում սխալներով կամ վրիպակներով առաջադրանքներ, որոնք էլ իրենց հերթին շրջանավարտների, դիմորդների և նրանց ծնողների բողոքն էին հարուցում: Ուրեմն, շտեմարանների ստեղծման նպատակը, առաջին հերթին, նման երևույթներից խուսափելն էր:

**Հարց:** Հատկապես <<Հայոց լեզու և հայ գրականություն>> և <<Անգլերեն>> առարկաների շտեմարանների որոշ առաջադրանքների վերաբերյալ որոշ խիստ քննադատություններ եղան: Ի՞նչ կասեք այս մասին:

**Պատասխան:** Շտեմարանները մեզանում համեմատաբար նոր երևույթ են, հետևաբար դրանց շուրջ ծավալված քննարկումները, երբեմն նաև խիստ գնահատականները ինչ-որ առումով բնական կարելի է համարել: Շտեմարանները միտված են բացառելու քննական թեստեր կազմելիս թերություններ ու բացթողումներ կատարելու հավանականությունը, իսկ այն փաստը, որ ներկայիս շտեմարաններում թերություններ կան, բոլորովին էլ չի խոսում դրանք կազմող մասնագետների ոչ արհեստավարժ լինելու մասին: 5000-7000 առաջադրանքների մեջ հնարավոր են նաև սխալներ սպրդեն: Ի դեպ, դրանք տարբեր բնույթի սխալներ են՝ տեխնիկական, բովանդակային, կան նաև վրիպակներ և այլն: Շտեմարանների առկայության առավելությունը հենց այն է, որ այն, ինչ չեն նկատել կազմող մասնագետներն ու աշխատանքային խմբերը, կնկատեն տվյալ առարկայի այլ մասնագետներ, ուսուցիչները, քննություններին նախապատրաստվողներ և այլք, ինչի շնորհիվ թերություն ունեցող առաջադրանքները չեն ընդգրկվի ավարտական և միասնական քննությունների թեստերում:

**Հարց:** Ի՞նչ սկզբունքով են ընտրվել շտեմարանների հեղինակային խմբերը:

**Պատասխան:** Տարբեր հրատարակչություններում հրատարակված շտեմարանների հեղինակային խմբերն ընտրվել են այդ



հրատարակչությունների կողմից: ԳԹԿ-ի կողմից ընտրվել են միայն «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Ֆրանսերեն» առարկաների շտեմարանների հեղինակային խմբերը: Շտեմարանների հեղինակային խմբերում ընդգրկվել են մասնագետներ բոլոր առաջատար բուհերից, ԳԹԿ-ից, Կրթության ազգային ինստիտուտից, տվյալ առարկայի ուսուցիչներ, ինչպես նաև այլ մասնագետներ, որոնք համաձայնել են աշխատել այդ խմբերում:

**Հարց:** Ինչպե՞ս է անցկացվում շտեմարանների փորձաքննությունը:

**Պատասխան:** Շտեմարանների փորձաքննությունն իրականացվում է հրատարակչությունների դիմումների հիման վրա: ՀՀ կառավարության 2012 թվականի մայիսի 10-ի N 591 որոշման համաձայն ԳԹԿ-ն պատասխանատու է շտեմարանների բովանդակության համար, ուստի ԳԹԿ-ն իրավունք ունի իրականացնել շտեմարանների թեստաբանական փորձաքննություն և հաստատել առաջադրանքները որպես շտեմարանների առաջադրանքներ: Հրատարակչությունները դիմում են ԳԹԿ-ին՝ ներկայացնելով շտեմարանների աշխատանքային խմբերի անդամների ցուցակները և շտեմարանային առաջադրանքները: ԳԹԿ-ն ստեղծում է հատուկ թեստաբանական խմբեր, որոնք էլ հաստատում են առաջադրանքների պիտանելիությունը: Ի դեպ, խմբերում ընդգրկված են նաև դասագրքերի ու մեթոդական ձեռնարկների հեղինակներ:

**Հարց:** Արդյոք շտեմարանները մի՞շտ են համապատասխանում դպրոցի ուսումնական ծրագրերին: Ինչո՞ւ են ապագա դիմորդները բողոքում շտեմարանների բարդությունից:

**Պատասխան:** Շտեմարանները թեստային առաջադրանքների բազաներ են և կազմվում են առարկայական չափորոշիչների, դպրոցական ծրագրերի, առարկայական ուղեցույցների և դասագրքերի հիման վրա: Բարդ շտեմարան հասկացություն չկա: Շտեմարանում պետք է լինեն տարբեր բարդության առաջադրանքներ, որպեսզի թեստ կազմող մասնագետը հնարավորություն ունենա թեստ կազմելիս ընտրել և՛ հեշտ, և՛ բարդ առաջադրանքներ, որպեսզի թեստի միջոցով հնարավոր լինի տարբերակել քննություն հանձնողների գիտելիքները:

**Հարց:** Արդյոք ճիշտ էք համարում, որ տարբեր հոսքերում սովորողները նույն թեստով են հանձնում քննությունը:

**Պատասխան:** Իսկապես որոշ առարկաներից նույն թեստով քննություն են հանձնում և՛ հատուկ հոսքերում, և՛ ընդհանուր հոսքերում սովորողները, սակայն եթե նկատի ունենանք, որ շտեմարաններում ընդգրկված է ծրագրերի այն մասը, որն ընդհանուր և պարտադիր է բոլոր հոսքերում սովորողների համար, ապա խնդիրը պարզ կդառնա: Որևէ բան փոխելու համար հարցը պետք է քննարկվի ԿԳ նախարարությունում կամ այդ քաղաքականությունը մշակող լիազոր մարմնում, և եթե մեզ առաջարկվի տարբեր թեստեր կազմել, ապա այդպես էլ կանենք: Կիրառվող ձևի առավելությունն այն է, որ բուհի դիմորդը հնարավորություն է ունենում դիմել 2 անվճար, 6 վճարովի տեղերի համար, իսկ տարբերակված թեստերի կիրառման դեպքում դիմորդը կկորցնի այդ հնարավորությունը:

**Հարց:** Հարցնողներ կան, թե հնարավո՞ր է արդյոք շտեմարաններում եղած այդքան բարդ առաջադրանքները սերտել և առանց կրկնուսույցի բարձր գնահատական ստանալ:

**Պատասխան:** Ես արդեն նշեցի, որ դիմորդները քննություն են հանձնում ոչ թե շտեմարաններով, այլ դրանցից ընտրված առաջադրանքներով: Շտեմարանը բաց բազա է, և յուրաքանչյուր դիմորդ ինքնուրույն կարող է պարապել առանց կրկնուսույցի, քանի որ տրված են նաև պատասխանները: Ուստի ասել, թե շտեմարանը բարդ է և կրկնուսույցի անհրաժեշտություն կա, կարծում եմ, տեղին չէ: Նշեմ նաև, որ մինչև շտեմարանների գործադրումը հնարավոր չէր իմանալ, թե ինչ հարցեր կլինեն քննական թեստում, կարող էր և ընդգրկված լինել դասագրքերի ամբողջ նյութը, իսկ շտեմարանը կրճատում, կոնկրետացնում է դիմորդի յուրացնելիք նյութի ծավալը:

**Հարց:** Ինչպե՞ս են որոշվել առաջադրանքների տեսակները, եղե՞լ են նախնական քննարկումներ:

**Պատասխան:** Թեստերի կառուցվածքը բխում է պետական ավարտական և միասնական քննությունների ուղեցույցների կառուցվածքից, իսկ ուղեցույցների կառուցվածքը նախօրոք քննարկվում է մասնագետների խմբի կողմից: Ուղեցույցները արդեն մի քանի տարի հրատարակվում են, այսինքն՝ դրանք արդեն ենթարկվել են փորձաքննության: Բացառություն է կազմում միայն

«Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի ուղեցույցը, որի մեջ այս տարի ավելացել է «պնդումների փունջը»։ Այդ ուղեցույցը նույնպես քննարկվել է մասնագետների կողմից, դրվել է ԳԹԿ կայքում և բաժանվել ապագա շրջանավարտներին ու դիմորդներին։

**Հարց:** Ինչո՞ւ են ուղեցույցներում, ապա նաև շտեմարաններում ընդգրկվել «պնդումների փունջ» առաջադրանքները։

**Պատասխան:** Առաջադրանքների այս տեսակը կիրառվում է դեռ 2008 թվականից։ Այն արժանացել է և՛ մեր, և՛ օտարերկրացի մասնագետների հավանությանը։ Դրանք թեստերի մեջ ներառվում են որոշակի նպատակով։ Սովորաբար միջազգային պրակտիկայում կիրառվում են են առաջադրանքների տարբեր տեսակներ։ Դրանք են՝

- ընտրովի, երբ տրված է պատասխանի 4 տարբերակ, որից պետք է ընտրել միակ ճիշտ տարբերակը,
- կարճ պատասխանով առաջադրանքներ, երբ պետք է կատարել առաջադրանքը և գրել պատասխանը,
- ընդարձակ պատասխանով առաջադրանքներ, երբ պետք է շարադրել պատասխանը կամ գրել լուծումները (այս տեսակի առաջադրանքները միասնական քննությունների մեր թեստերում չեն ընդգրկվում, բայց ուրիշ երկրներում կիրառվում են),
- «պնդումների փունջ» առաջադրանքներ, որոնց դիմորդը պետք է պարասխանի՝ «ճիշտ է», «սխալ է» կամ «չգիտեմ»։ Առաջադրանքի այս տեսակը օգնում է տարբերակել հստակ գիտելիք ունեցող դիմորդին մեկ այլ՝ պատասխանի հարցում կասկածող կամ պատասխանը պատահաբար ընտրող դիմորդից։ Որպեսզի պատահական ընտրելու հնարավորությունը նվազի, կիրառվում է 0, 1, -1 միավորի կանոնը։

Հարցազրույցը վարեց Աստղիկ ԱՎԵՏՅԱՆԸ

---

## Շտեմարանը գիտելիքի ստուգման միջոց է

Կրթության ոլորտը մշտապես եղել մեր հասարակության ուշադրության կենտրոնում: Դրանում կատարվող ցանկացած փոփոխություն անարձագանք չի մնում: Ի վերջո, ի՞նչ է հարկավոր մեր կրթությունը ավելի որակյալ դարձնելու, ավելի բարձր մակարդակի հասցնելու համար: Ժամանակները փոխվել են, դպրոցին ներկայացվող պահանջները՝ նույնպես, բայց մի բան անփոփոխ է՝ դպրոցը պետք է աշակերտին տա որոշակի գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, որոնք նա կարողանա օգտագործել իր ամբողջ կյանքում, դպրոցում ստացած գիտելիքներով դիմորդը պետք է կարողանա ընդունվել իր նախընտրած բուհը:

Վերջին շրջանում շատ են քննարկվում ավագ դպրոցների, քննությունների և առավել շատ՝ շտեմարանների հարցը: Շտեմարանների վերաբերյալ ուսուցիչները կարծիքն իմանալու համար զրուցեցինք տարբեր առարկաների ուսուցիչների հետ՝ խնդրելով նրանց ներկայացնել իրենց դիտողություններն ու առաջարկությունները:

**Մոնա ՄԻՄՈՆՅԱՆ, Արարատ քաղաքի ավագ դպրոցի քիմիայի ուսուցչուհի**

-Առաջին անգամ, երբ հայ իրականության մեջ շտեմարաններ հայտնվեցին, առաջացան խնդիրներ. եղած ծրագրերը, դասագրքերը չէին համապատասխանում ստեղծված շտեմարաններին: Սակայն ժամանակի հետ, երբ փոխվեցին դասագրքերը, այսինքն՝ երբ հայտնվեցին հայ հեղինակների դասագրքերը, որոնք համապատասխանում էին ստեղծված շտեմարանների պահանջներին, այդ խնդիրը մասամբ լուծվեց: Ինչ խոսք, այն շտեմարանները բարդ էին և կային դժգոհություններ:

Շտեմարանների որոշ առաջադրանքներ դժվար հաղթահարելի էին անգամ ուսուցչի, սակայն այդ շտեմարանները կարող էին որպես առաջադրանքների լավ բանկ ծառայել՝ քննություններին նախապատրաստվելու համար: Քննություններն էլ այլ ձևով էին անցկացվում, շատ բան կախված էր քննողի սուբյեկտիվ վերաբերմունքից: Վիճակը շտկվեց մի քանի տարի առաջ, երբ առաջ եկավ քննությունների հանձնման թեստային համակարգը: Կարծում եմ, մեծացավ օբյեկտիվության աստիճանը, բայց փոքրացավ մարդկային գործոնը, ինչից, անշուշտ, շահում է դիմորդը: Մակայն, իմ կարծիքով, այս դեպքում մի փոքր տուժում է գիտելիքը:

Այսօրվա քիմիայի շտեմարանը շատ ավելի մատչելի է, աշակերտն ավելի հեշտ է հաղթահարում այն, ու ես մտավախություն ունեմ, որ միասնական քննությունների ժամանակ առավելագույն գնահատական ստացողների թիվը կտրուկ կավելանա: Հնարավոր է նաև, որ ապագա դիմորդը կարող է պարզապես անգիր անել քննական նյութը, որը ճշգրիտ գիտությունների դեպքում՝ ուղակի անթույլատրելի է: Այնուամենայնիվ, եթե ընդունելության քննության այսօրվա կարգը համեմատենք նախկին ձևի հետ, որը շատ խոցելի տեղեր ուներ, օբյեկտիվության առումով դրանք անհամեմատելի են:

Առաջարկությունս այն է, որ թեստում ներառված առաջադրանքների մի մասը լինի շտեմարանից, մյուս մասը՝ ոչ, իհարկե, վերջիններս համապատասխանեն ուղեցույցին: Քիմիայի շտեմարանը կազմող խմբի աշխատանքին ծանոթ եմ, անգամ մի քանի առաջարկություններ եմ արել, խմբի անդամները գործին մոտենում են մեծ զգուշավորությամբ: Մի առաջարկ ևս՝ կցանկանայի, որ միասնական թեստում ներառվեին համեմատաբար բարդ առաջադրանքներ, շտեմարանից դուրս, որոնցով հնարավոր լիներ <<հայտնաբերել>> բացառիկ, օժտված դիմորդներին:

Ցանկացած նոր գործում կարևորն այն է, որ դրականը գերակշռի: Այս պարագայում ես դա տեսնում եմ: Շտեմարանները լավն են, ազնիվ, զրազետ են կազմված, համապատասխանում են ծրագրին, ուղեցույցին, թեստերում անկանխատեսելի հարցեր չեն լինի: Ես կարծում եմ, որ

համապատասխան հոսքային դասարաններում սովորող աշակերտները շտեմարանի օգնությամբ, առանց կրկնուսույցի էլ կարող են պատրաստվել միասնական քննությանը, դրա ապացույցը ստուգողական աշխատանքների արդյունքներն են: Դրանց առաջադրանքները վերցված են շտեմարանից և, պիտի ասեմ, աշակերտները առանց մեծ դժվարության հաղթահարում են՝ ստանալով բարձր միավորներ:

### **Գոհար ՊՈՂՈՍՅԱՆ, Հրագրանի թիվ 13 ավագ դպրոցի կենսաբանության ուսուցչուհի**

-Քննական առաջադրանքների շտեմարանների ստեղծման գաղափարն ինքնին լավ գաղափար է, որովհետև այդ շտեմարաններով դիմորդը կարող է հիմնավորապես պատրաստվել միասնական քննությանը: Հատկապես ես դրանք կարևորում եմ մարզերի աշակերտների համար, ովքեր կրկնուսույցի մոտ պարապելու հնարավորություն, հիմնականում, չունեն: Բարեխիղճ աշակերտը օգտվելով շտեմարաններից և առաջնորդվելով ավարտական և միասնական քննության ուղեցույցով, կարող է անգամ միայնակ պատրաստվել միասնական քննությանը:

Ինչ վերաբերում է <<Կենսաբանություն>> առարկայի շտեմարանին, ապա դրանում նկատել ենք ոչ ծրագրային որոշ առաջադրանքներ և տեղեկացրել ենք շտեմարանը կազմող խմբին: Խոստացել են, որ հաշվի կառնեն մեր դիտողությունները, և այդ առաջադրանքները չեն ընդգրկվի միասնական քննության թեստերում: Կցանկանայի նաև, որ առաջադրանքները լինեին ավելի բազմաբնույթ: Մի մտավախություն ունեմ՝ արդյոք այս ամենը բացասաբար չի՞ անդրադառնա երեխաների տրամաբանելու ունակության վրա:

### **Իսկուհի ՀԱԿՈՒՅԱՆ, Արմավիրի մարզի Ապագա գյուղի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և հայ գրականության ուսուցչուհի**

-Արդեն երկու տարի է գործածության մեջ է հայոց լեզվի և հայ գրականության շտեմարանը: Կարծում եմ՝ դյուրին չէ շտեմարան կազմելը՝ ընդգրկելով ծրագրային ողջ նյութը, ապահովելով առաջադրանքների բազմազանությունը, միաժամանակ գոհացնելով թե՛ դիմորդին, թե՛ ուսուցչին: Կատարված է մեծ ու ծավալուն աշխատանք: Շնորհակալություն եմ հայտնում հեղինակային խմբի անդամներին և մաղթում հաջողություն այդ շարունակական գործում:

Շտեմարանի վերաբերյալ հնչում են քննադատական խոսքեր: Ես քննադատել չեմ ուզում, պատկանում եմ այն մարդկանց թվին, ովքեր աշխատանքում ընդունում են համագործակցության սկզբունքը: Եվ հենց այդ տեսանկյունից ուզում եմ մի քանի առաջարկություններ անել: Կարծում եմ, շուրջ երեսուն տարվա իմ աշխատանքային փորձը այդ

իրավունքը տալիս է ինձ: Շտեմարան պետք է լինի, անշուտ, դիմորդը տեղյակ պիտի լինի առաջադրանքների այն ծավալին, որի սահմաններում քննություն է հանձնելու: Մակայն, թեև Հայոց լեզվի և հայ գրականության շտեմարանի առաջադրանքների մեծ մասը համապատասխանում է ծրագրային նյութերին, բայց առաջադրանքներ էլ կան, որոնց պատասխանները դիմորդը պիտի փնտրի ծրագրային նյութից դուրս: Պետք է խուսափել նման բաներից:

Առաջարկում եմ նաև որոշ չափով նվազեցնել առաջադրանքների քանակը, քննական թեստերում չընդգրկել բարդ նախադասության գծապատկերների, բառարանագրության վերաբերյալ առաջադրանքները: Իմ կարծիքով, վերանայման կարիք ունեն գրականության հարցերը: Ցանկալի է, որ պարզեցվեն որոշ առաջադրանքների պահանջները: Հուսով եմ, որ հաշվի կառնվեն մասնագետների կողմից արված առաջարկությունները, և հայոց լեզվի ու հայ գրականության պետական ավարտական և միասնական քնությունների շտեմարանները լույս կտեսնեն առանց վերոնշյալ թերությունների և վրիպակների և մի քանի տարի փոփոխության չեն ենթարկվի:

### **Անահիտ ՊԵՏՐՈՍՅԱՆ, Անանիա Շիրակացու անվան ճեմարանի քիմիայի և կենսաբանության ուսուցչուհի**

-Քիմիայի շտեմարանից ես հիմնականում գոհ եմ, գոհ են նաև աշակերտներս. դրանց առաջադրանքները կատարելիս առանձնապես չեն դժվարանում: Ինչ խոսք, կան նաև խնդիրներ, որոնք կարծես թե դիմորդին նեղը գցելու համար են, իհարկե, դրանք էլ են պետք. բարձր միավոր ստացողը այդ <<ծուղակներից>> էլ պետք է կարողանա դուրս գալ: Նույնը, ցավոք, չեմ կարող ասել կենսաբանության շտեմարանի վերաբերյալ: Շտեմարանի առաջին հատորը հաջողված էր, դրանում առաջադրանքներ կան, որոնք շտկելու կարիք ունեն, բայց դրանց թիվը մեծ չէ: Երկրորդում, երեխաներն էլ նկատեցին, կան կրկնվող առաջադրանքներ, իսկ երրորդը կազմելիս, կարծես թե հեղինակները ավելորդ շտապողականություն են ցուցաբերել:

Կենսաբանության շտեմարանի խնդիրները բավականին հեշտ են, երեխաները լուծում են, չեն դժվարանում: Մեր դժգոհությունը հարցերի ձևակերպման հետ է կապված: Թվում է, թե ռուսերեն են մտածել, հայերեն ձևակերպել: Այս հարցում իմ և աշակերտների կարծիքները հիմնականում համընկնում են: Ծրագրի և շտեմարանի առաջադրանքների միջև անհամապատասխանություն չկա, այս առումով դժգոհություն չունենք, ընդհակառակը, նոր դասագրքերը չափից ավելի հազեցած են բազմազան տեղեկություններով, և լավ է, որ այդ ամբողջը շտեմարանում չի ընդգրկվել:

Կցանկանայի խոսել մի հարցի մասին ևս. կան այնպիսի թեմաներ, որոնք ծրագրային են, բայց շտեմարաններում չեն ընդգրկվել: Աշակերտներն աշխատում են շրջանցել դրանք՝ պատճառաբանելով՝ ինչու սովորենք, եթե թեստում չեն ընդգրկվելու:

### **Նաիրա ՄՈՍԻՆՅԱՆ, Երևանի թիվ 114 ավագ դպրոցի անգլերենի ուսուցչի**

- Նախ կուզեի խոսել շտեմարան երևույթի մասին: Շտեմարանների մասին իմ կարծիքը մի փոքր տարբերվում է ընդունված կարծիքից: Շտեմարանը պետք է որպես աղբյուր, գրականություն ծառայի միասնական քննությանը նախապատրաստվելու համար: Շտեմարան պետք է լինի, որովհետև շատ անգամ երեխաներն ուղղակի չգիտեն որտեղից վերցնեն համաատասխան նյութը, որպեսզի ամրապնդեն իրենց գիտելիքները: Շտեմարանը գիտելիքի աղբյուր չէ, այլ գիտելիքի ստուգման ձև է: Դրանով ապագա դիմորդները պետք է ծանոթանան քննական առաջադրանքների ձևին և բովանդակությանը, բայց այդ առաջադրանքները չպետք է ներառվեն քննական թեստերում: Իմ կարծիքն այն է, որ քննական նյութը պետք է լինի անծանոթ: Ասեմ ավելին, ես կարծում եմ, որ շտեմարանի առաջադրանքները պետք է շատ ավելի բարդ լինեն, քան քննական թեստինը: Եթե աշակերտն ունենա հարուստ գիտելիքներ, նա անպայման կհաղթահարի բոլոր դժվարությունները:

Ինչ վերաբերում է անգլերենի շտեմարանների բովանդակությանը, դրանք բավականին պրոֆեսիոնալ են կազմված: Թեպետ երբեմն մեղադրանքներ են հնչում, որ տեքստերում ներառված են անգլիական թեմաներ ու դրանք ներկայացնում են անգլիական միջավայրը, ես գտնում եմ, որ օտար լեզվի շտեմարաններում պարտադիր չէ, որ լինեն Հայաստանի կամ հայկական միջավայրի վերաբերյալ առաջադրանքներ: Առաջադրանքները լավն են, տարբեր բնագավառներից ընտրված: Նպատակը որն է՝ ստուգել աշակերտի կողմից տեքստի ընկալումը, թե՞ նրա բովանդակությունը: Շտեմարանի քերականական առաջադրանքներն էլ վատը չեն, իհարկե կան նյութեր, որոնք, իմ կարծիքով, բավականին բարդ են:

Հարցազրույցը վարեց Լուիզա ՄԱԹԵՎՈՍՅԱՆԸ



---

Արսեն ԲԱՂԴԱՍՍԱՐՅԱՆ  
Գնահատման և թեստավորման  
կենտրոնի փոխսնօրեն

## **Ռուսաց լեզվին նվիրված ազգային մի հետազոտության մասին**

### **1. Ազգային հետազոտությունների անհրաժեշտությունը**

Համաշխարհային կրթական հանրությանն ինտեգրվելը համարվում է Հայաստանի կրթության կարևորագույն ուղղություններից մեկը: Մասնակցությունը կրթական հետազոտություններին բացահայտում է Հայաստանի կրթական համակարգի համեմատաբար ուժեղ և թույլ կողմերը: Մասնավորապես, կրթական հետազոտությունները բացառիկ հնարավորություն են տալիս բացահայտելու երկրի կրթական համակարգի ընդհանուր վիճակը: Ուսումնասիրություններից ստացված տեղեկությունները մեծ նշանակություն ունեն կրթական հետազոտության բարեփոխումների համար: Հնարավորություն է առաջանում ուսումնասիրելու և վերանայելու գործող կրթական ծրագրերի և դասագրքերի մշակման, ուսուցիչների պատրաստման և դասավանդման փորձն ու ավանդույթները: Կրթական համակարգը բարելավելու և զարգացնելու համար նախ և առաջ պետք է հստակ պատկերացնել համակարգի ներկա վիճակը: Ցանկացած համակարգի մասին հավաստի պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է այն դիտարկել համեմատության մեջ: Աշխարհում այդ համեմատությունը տարիներ ի վեր իրականացվում է կրթական հետազոտությունների՝ ստուգատեսների միջոցով: Սակայն սույլ մասնակցությունը միջազգային ստուգատեսներին չի կարող լուծել գնահատման ոլորտի բոլոր խնդիրները: Անհրաժեշտ է հստակ պատկերացնել արդի կրթական համակարգի ներքին խնդիրները, որն անհնար է առանց մայրաքաղաքում և մարզերում ուսումնասիրություններ կատարելու և դրանց արդյունքները համեմատելու:

TIMSS միջազգային հետազոտություններին մասնակցելու Հայաստանի առաջին քայլերը կատարվել են մաթեմատիկայի և բնագիտական առարկաների կրթական ստուգատեսներին մասնակցելու միջոցով: Ցավոք, Հայաստանը դեռևս չի կարողանում մասնակցել հումանիտար առարկաներից անցկացվող նմանատիպ հետազոտությունների (հույսեր կան, որ ապագայում դա կարող է իրականանալ, մասնավորապես՝ մասնակցել մայրենի լեզվով ընթերցանությունն ու ընկալումը ուսումնասիրող PIRLS հետազոտություններին): Հայագիտական առարկաների (Հայոց լեզու և գրականություն, Հայոց պատմություն) առումով որոշակի քայլեր են կատարվում Գնահատման և թեստավորման կենտրոնի ջանքերով և ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությամբ իրականացվող գիտական աշխատանքների շնորհիվ:

Ուշագրավ և արդիական հնչեղություն ունի Հայաստանի դպրոցներում օտար լեզուների դասավանդման ներկա վիճակի ուսումնասիրությունը: Անշուշտ, դժվար է ակնկալել, որ մեր դպրոցի շրջանավարտը իրեն կարող է լիարժեքորեն դրսևորել ընտրած մասնագիտությամբ աշխատելիս և պիտանի լինել երկրին, հասարակությանն ու ընտանիքին՝ առանց արտաքին աշխարհի հետ շփման և համագործակցության հնարավորություն ունենալու: Իսկ դրա համար, առաջին հերթին, նա պիտի պատշաճ մակարդակով տիրապետի օտար լեզուների: Գաղտնիք չէ, որ ոչ բոլոր մասնագիտությունների և գիտական ուղղությունների համար կա հայերենով մասնագիտական լիարժեք գրականություն: Ուստի իր մասնագիտական ոլորտին վերաբերող նորագույն ձեռքբերումներին և մեթոդներին ծանոթանալու համար երիտասարդ մասնագետը պետք է դրանք ուսումնասիրի սկզբնաղբյուրի լեզվով՝ հիմնականում ռուսերենով և անգլերենով: Նշված նկատառումներով է պայմանավորված օտար լեզուների գծով խորացված հետազոտություն կատարելու անհրաժեշտությունը: **Ընդհանուր առմամբ, այս բացառիկ կարևորություն ունեցող նպատակին է նվիրված մեր ծրագիրը:**

## 2. Ռուսաց լեզվի իմացության կարևորությունը

Սովետական տարիներին ռուսաց լեզուն Հայաստանում երկրորդ լեզուն էր համարվում: Դժվար թե հնարավոր լիներ գտնել մեկին, որը գոնե բավարար մակարդակով չտիրապետեր ռուսաց լեզվին: Խորհրդային Միության փլուզումից հետո, Հայաստանի Հանրապետության կայացման դժվարին տարիներին, քաղաքական և տնտեսական բնույթի բազմաթիվ խնդիրների շարքում հարցեր առաջացան նաև կրթության ոլորտում: Նախկին հարաբերությունների կորստի պատճառով ռուսաց լեզվի իմացության մակարդակի որոշակի անկում տեղի ունեցավ (հատկապես

երիտասարդության շրջանում): Մյուս կողմից, սահմանները բացվելու և տեղեկատվական տեխնոլոգիաների աննախադեպ զարգանալու հետևանքով բարձրացավ անգլերենի դերը, ինչը ևս, հավանաբար, դարձավ ռուսաց լեզվի իմացության մակարդակի նվազման պատճառներից մեկը:

Ռուսաց լեզվի դերը շատ կարևոր է միջազգային շփումների առումով (մասնավորապես ԱՊՀ տարածքում), արվեստի և գրականության ասպարեզներում, գիտական փորձի և արդյունքների փոխանակման համար: Այժմ թվում է, թե բարելավվում է հանրապետության դպրոցներում ռուսաց լեզվի դասավանդման մակարդակը, սակայն դա միայն ընդհանուր տպավորություն է: Ցանկալի է ունենալ Հայաստանի դպրոցների աշակերտների ռուսաց լեզվի իմացության մակարդակը և այն ձևավորող գործոնները բնութագրող գիտականորեն հիմնավորված տվյալներ, որոնց ձեռք բերման եղանակները աշխարհում վաղուց հայտնի են որակյալ հետազոտական գործիքակազմի մշակում, թեստավորման միջոցով դրա հստակ կիրառում, արդյունքների համակողմանի վիճակագրական վերլուծություն և մեկնաբանում, եզրակացությունների կատարում:

### **3. Հարցադրման կարևորությունը**

Տասնամյակներ շարունակ Հայաստանում իներցիայով (տարիների ընթացքում ձևավորված ավանդույթների, հարաբերությունների, հեռուստատեսության և համացանցի մեծ ազդեցության և այլ գործոնների շնորհիվ) երիտասարդների շրջանում դեռ պահպանվում է ռուսաց լեզվի իմացության որոշակի մակարդակ: Սակայն հստակ չի երևում դպրոցի դերը դրա պահպանման և բարձրացման հարցում, չկա վստահություն, որ ռուսաց լեզուն Հայաստանի դպրոցներում դասավանդվում է ժամանակակից իրողություններին և միտումներին համապատասխան: Հայտնի է, որ աշակերտի գիտելիքների, մասնավորապես օտար լեզուների իմացության հիմքը դրվում է կրտսեր դպրոցում: Հակառակ դեպքում օտար լեզուն աշակերտի համար կարող է դառնալ երկրորդական, ոչ կարևոր առարկա, և այդ առարկայից բարձր դասարաններում արդեն հաճախ հնարավոր չի լինում օտար լեզվի անհրաժեշտ գիտելիքների պաշար կուտակել: Այդ իսկ պատճառով, շատերը ստիպված են լինում լրացուցիչ դասընթացների միջոցով լրացնել դրանց պակասը:

Ներկայումս Հայաստանի դպրոցներում ռուսաց լեզվի վիճակը թեև չի կարելի աղետալի համարել, սակայն եթե մոտ ապագայում անհրաժեշտ քայլեր չձեռնարկվեն, ապա այդ առումով կարող են լուրջ խնդիրներ առաջանալ: Իսկ արդյունավետ քայլեր ձեռնարկելու համար նախ և առաջ

պետք է հստակ պատկերացնել խնդրի առկա վիճակը, ընկալել ծավալները և հասկանալ ազդեցություն ունեցող այս կամ այն գործոնի նշանակալիությունը: Մեր հետազոտության ընթացքում նախատեսվում է թեստավորման և մաթեմատիկական վիճակագրության մեթոդների լայն կիրառման միջոցով պարզել ռուսաց լեզվից Հայաստանի Հանրապետության դպրոցների աշակերտների առաջադիմության ընդհանուր պատկերը, հայտնաբերել ու պարզել այդ մակարդակը ձևավորող հիմնական գործոններն ու դրանց նշանակալիության աստիճանը, հետազոտել աշակերտների գիտելիքների, հմտությունների և ունակությունների փոխազդեցությունն ու օրինաչափությունները, գնահատել ներկա վիճակում աշակերտների առաջադիմության միտումները: Նախատեսվում է մշակված թեստավորման նյութերի (խնդրաշարեր, հարցաշարեր, ձեռնարկներ, ուղեցույցներ և այլն) միջոցով իրականացնել գիտելիքների թեստավորում, սոցիոլոգիական հարցում անցկացնել Հայաստանի դպրոցներում: Հավաքված տվյալների մանրամասն և համակողմանի վիճակագրական վերլուծության միջոցով կպարզվի ինչպես աշակերտների գիտելիքների ընդհանուր պատկերը, այնպես էլ կբացահայտվի առաջադիմության ցուցանիշների կախվածության աստիճանը հարցաշարերում ընդգրկված ազդեցության գործոններից:

#### **4. Գիտական նպատակները**

Հետազոտության գլխավոր նպատակն է բարձրացնել Հայաստանի Հանրապետության դպրոցներում ռուսաց լեզվից աշակերտների գիտելիքների մակարդակը, օժանդակել նրանց ձեռք բերած գիտելիքներով համարձակ անցնելու հասուն կյանքի սեմը և օգտակար լինելու հարազատ ընտանիքին, ազգին և պետությանը:

Մենք հետապնդում ենք հետևյալ նպատակները.

1. Պարզել աշակերտների գիտելիքների մակարդակը ռուսաց լեզվից: Դրա համար պետք է մշակել թեստավորման գործիքակազմը, անցկացնել թիրախային միջավայրի թեստավորում, կատարել ստացված արդյունքների վիճակագրական վերլուծություն, արդյունքների ամփոփում:
2. Հայտնաբերել աշակերտների առաջադիմության վրա ազդող հիմնական գործոնները և գնահատել դրանց նշանակալիությունը: Հետազոտվող գործոնների շարքում կարելի է նշել հետևյալները`
  - բնակության վայրը (մայրաքաղաք, քաղաք, գյուղ),
  - ընտանիքը (սոցիալական վիճակը, ծնողների կրթությունը, սոցիալական դիրքը և այլն),

- դպրոցը (տեխնիկական վիճակը, ֆինանսական ապահովվածությունը, հագեցվածությունը և այլն),
  - մթնոլորտը դպրոցում (հարաբերությունները համադասարանցիների և ուսուցիչների հետ, բացակայությունները և վարքագիծը, ծնողների մասնակցությունը, միջոցառումները և այլն),
  - դասավանդումը (դասավանդման մեթոդները, նոր նյութի մատուցումը, տնային առաջադրանքները, հարցումներն ու գնահատումը և այլն),
  - գործունեությունը դպրոցից դուրս (տնային աշխատանք, օգնություն ծնողներին, շփում ընկերների հետ, գրքեր, սպորտ, հեռուստահաղորդումներ և այլն),
  - աշակերտի սեռը (տղա, աղջիկ),
  - վերաբերմունքը առարկային (անձնական վերաբերմունքը, ինքնագնահատականը, համեմատումը մյուս առարկաների հետ, ապագայի պլանները և այլն):
3. Կատարել աշակերտների գիտելիքների համեմատություն, տվյալների վիճակագրական վերլուծություն, հայտնաբերել աճի միտումները և հարաբերակցային կապերը: Նախատեսվում է իրականացնել գիտելիքների մակարդակների համեմատություն աշակերտների հետևյալ ուսումնասիրվող խմբերի միջև՝
- Երևանի և մարզերի դպրոցների շրջանավարտների,
  - Հայաստանի մարզերի դպրոցների աշակերտների միջև:
4. Ուսումնասիրել ռուսաց լեզվի դասավանդման հետ կապված հարցերը: Այդ թվում՝
- ռուսաց լեզվի դասավանդման մեթոդները,
  - դասավանդման ծրագրերի համապատասխանությունը որոշակի չափանիշների,
  - ուսումնական գրականության հագեցվածությունը և որակը:
5. Հետազոտության արդյունքների հիման վրա կատարել եզրակացություններ, ամփոփումներ, անցկացնել սեմինարներ, ուսուցիչների կատարելագործման դասընթացներ:
- Վստահ ենք, որ սույն ծրագրի նույնիսկ մի մասի իրականացումը չափազանց կարևոր կլինի մեր դպրոցներում ռուսաց լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու առումով:

---

Մերի ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԳԹԿ քննությունների կազմակերպման  
բաժնի առաջատար մասնագետ

## **Գնահատման համակարգի հիմնահարցեր**

Հայ իրականության մեջ տեղի ունեցող քաղաքական, տնտեսական, մշակութային ցանկացած փոփոխություն մեծ ազդեցություն է ունենում կրթության բնագավառի վրա: Արդի կրթական համակարգերը արմատական վերափոխումների ընթացքի մեջ են: Վերջին տարիներին կատարված փոփոխություններից են՝

- Գնահատման և թեստավորման կենտրոնի ստեղծումը և արտաքին ու ներքին գնահատման նոր համակարգի կայացումը,
- անցումը տասներկուամյա միջնակարգ կրթության,
- առանձնացված ավագ դպրոցների ստեղծման ծրագրերի իրականացումը,
- հանրակրթության մասին օրենքի ընդունումը:

Գնահատման և թեստավորման կենտրոնը կոչված է նպաստելու ՀՀ կրթության համակարգում սովորողների ընթացիկ առաջադիմության՝ գիտելիքների, կարողությունների գնահատման գործընթացի բարեփոխմանը, կրթության որակի բարձրացմանը:

Քանի որ իմ նախորդ հոդվածում<sup>4</sup> անդրադարձել եմ Գնահատման և թեստավորման կենտրոնի ստեղծման անհրաժեշտությանը, պետական ավարտական և միասնական քննությունների կազմակերպման հիմնախնդիրներին, ուստի ստորև կանդրադառնամ գնահատման համակարգի՝ մասնավորապես ներքին և արտաքին գնահատման հիմնախնդիրներին:

Այժմ ՀՀ միջնակարգ կրթությունը եռաստիճան է, 12 տարի տևողությամբ, առաջին աստիճանը՝ 4 տարի, երկրորդ աստիճանը՝ 5 տարի և երրորդ աստիճանը՝ 3 տարի<sup>5</sup>: 2008 թվականի մարտի 27-ին Հայաստանի

---

<sup>4</sup> Հանրակրթություն. գնահատում և թեստավորում, վերլուծական-տեղեկատվական հանդես, 2 (7). 2010, էջ 32

<sup>5</sup> Հանրակրթության պետական կրթակարգ, միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Երևան 2004, էջ 9

Հանրապետության կառավարության թիվ 12 արձանագրային որոշմամբ հաստատվեց ավագ դպրոցների ստեղծման ռազմավարական ծրագիրը: Այսօր արդեն ունենք 105 ավագ դպրոց: Անտարակույս, միջնակարգ կրթության առումով ավագ դպրոցում դեռևս խնդիրներ կան, որոնք ոչ թե սուբյեկտիվ են, միայն դպրոցին կամ ծնողին են վերաբերում, այլ ըստ էության համակարգային հիմնախնդիրներ են: Կարևոր է միջնակարգ կրթությունից հետո որակի ստուգումը: Գնահատման և թեստավորման կենտրոնն այն լծակն է, որը պետք է ստուգի՝ արդյո՞ք կատարվում է պետության պատվերը, որը 12 տարի շարունակ տրվել է պետական կամ ոչ պետական դպրոցներին: Պետք է լուծենք այն հարցը, թե կրթական հաստատությունը, որը տվյալ սերնդին 12 տարի կրթել է, արդյոք որակն՞վ է դա արել, թե՞ անորակ: Եվ, ի վերջո, Գնահատման և թեստավորման կենտրոնը իր գործունեությամբ պետք է նպաստի կրթության որակի բարձրացմանը:

Հանրակրթության գնահատման համակարգը ներկայացվում է ներքին և արտաքին գնահատման ենթահամակարգերով: Ներքին գնահատումը կատարվում և իրականացվում է հանրակրթական հաստատությունների կողմից իրականացվող ներքին գնահատման գործընթացներով, որոնք ներառում են յուրաքանչյուր ուսումնական խմբի շրջանակում իրականացվող գնահատման գործընթացները և համադպրոցական մակարդակով կազմակերպվող գնահատման գործընթացները: Իրականում ներքին գնահատման գործընթացները ամբողջական չեն:

2008-2009 ուսումնական տարվանից սկսած Գնահատման և թեստավորման կենտրոնը իրականացնում է իր գլխավոր գործառնություններից մեկը՝ արտաքին ընթացիկ գնահատման գործընթացների կազմակերպումը: Այն նպատակաուղղված է պարզելու տվյալ հաստատությունում կրթության որակի օբյեկտիվ պատկերը, հսկելու յուրաքանչյուր աշակերտի ուսումնական առաջընթացը և բացահայտելու հանրակրթության ոլորտի խնդրահարույց հանգամանքները: Արտաքին ընթացիկ գնահատումը մի կողմից նպաստում է աշակերտների կողմից թեստային գնահատման ձևերի ու մեթոդների յուրացմանը, մյուս կողմից հնարավորություն է տալիս մասնագետներին կատարելու թեստաբանական հետազոտություններ և ձևավորելու թեստային առաջադրանքների բազա:<sup>6</sup>


Գնահատումը ընդհանրապես բարդ գործընթաց է, անհրաժեշտ է տարանջատել ու պարզել՝

- ո՞ւմ ենք գնահատում (դպրոց, ուսուցիչ, աշակերտ...),
- ի՞նչն ենք գնահատում (առաջադիմությունը, գիտելիքը, դասագիրքը, ծրագրերը...),
- ինչպե՞ս ենք գնահատում (թեստ...):

<sup>6</sup>Մկրտչյան Մ., «Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը», Երևան 2011, էջ 122:

Մխեմա 1.

Գ-պրոց



Արտաքին ընթացիկ գնահատման միջոցով մենք պարզում ենք տվյալ հաստատությունում սովորող աշակերտների գիտելիքները, բայց արդյո՞ք հնարավոր է միայն աշակերտների գիտելիքների գնահատումով պարզել տվյալ հաստատության կրթության որակի պատկերը: Ինչպե՞ս են գնահատվում նորակազմ դասագրքերը, փորձաշրջան անցնող՞ են, թե՞ անմիջապես ընդգրկվում են ուսումնական գործընթացի մեջ: Հայտնի է, որ ուսուցչի գործունեության գնահատման խնդիրը ժամանակակից դպրոցի արդյունավետ աշխատանքի ապահովման գործոններից մեկն է: Ուսուցիչների գործունեության գնահատման ձևերի խիստ թերի և անկատար լինելը վաղուց գոյություն ունեցող խնդիր է, որը պահանջում է գիտական, թափանցիկ և իրատեսական մոդելների մշակում և իրականացում:<sup>7</sup>

Գնահատման գործընթացի արդյունավետության բարձրացման համար առաջարկվում ենք հետևյալ սկզբունքները.

- գնահատումը աշակերտի առաջադիմության բացահայտման և չափման գործընթաց է, որը պետք է նպաստի կրթության որակի բարձրացմանը,
- գնահատումը անհրաժեշտ է դիտարկել որպես պարբերաբար հետադարձ կապ ապահովելու միջոց, ինչը կնպաստի աշակերտների գիտելիքների և հմտությունների անընդհատ զարգացմանը,

<sup>7</sup> Մանկավարժություն, Գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2009/1-2/, էջ 76



- Արդյունավետ և բազմակողմանի գնահատումը պետք է հիմնվի գնահատման մեթոդների բազմազանության վրա՝ և՛ առաջադիմության մակարդակը ճշտելու, և՛ նոր արժեքներ զարգացնելու համար:

Ի վերջո, ուսումնառության ընթացքում աշակերտը ոչ միայն ավելացնում է իր գիտելիքները, զարգացնում հմտությունները, կարողությունները, այլև ձեռք է բերում նոր աշխարհայացք, այնպիսի արժեքներ, որոնք կարող են նպաստել նրա հետագա առաջընթացին: Արդյունավետ բազմակողմանի գնահատումը պետք է հենվի գնահատման մեթոդների բազմազանության վրա: Գնահատումը պետք է դրական փոփոխությունների խթան լինի, նպաստի կրթության որակի բարձրացմանը:

---

Անահիտ ԽՈՍՐՈՎՅԱՆ

Երևանի Ջոն Կիրակոսյանի անվ.

թիվ 20 դպրոցի տնօրեն

## **Մանկավարժական նորարարական գործընթացների հիմնախնդիրներ**

Մարդուն ուսումնասիրող գիտությունների համակարգերը 21-րդ դարում ընդլայնել են իրենց ուսումնասիրությունների տիրույթը՝ փոխելով նաև համակարգերից յուրաքանչյուրի նպատակներն ու խնդիրները: Ժամանակակից մանկավարժությունը, լինելով այդ ընդհանուր սիներգետիկ համակարգի մի մասը, ուսումնասիրում է մարդու հոգևոր, մտավոր, ֆիզիկական զարգացումը, նրա գործունեության ձևերի և դրսևորումների համակարգը, ներաշխարհը: Դեռևս 20-րդ դարում մանկավարժությունը գիտություն էր դաստիարակության մասին: Այսօր այն ընդլայնել է իր տիրույթը և իբրև ուսումնասիրության առարկա ընտրել կրթությունը՝ հետազոտության մանրադիտակի տակ առնելով դրա շարունակականության և այլ հնարավորությունների բացահայտումները: Քանի որ մարդու զարգացումը ևս շարունակական բնույթ ունի, ապա կրթության ցանկությունը յուրաքանչյուր տարիքում ձևավորում է նոր պահանջումներ համակարգ, որոնք փոփոխություն են մտցնում անձնավորության արժեհամակարգի մեջ՝ կրթական ամենացածր օղակից տանելով նրան դեպի ինքնակրթություն: Մանկավարժությունը և՛ տեսական, և՛ գործնական գիտություն է, այն չի տալիս որոշակի բանաձևեր կամ լուծումներ, այլ առաջարկում է ստեղծագործական-որոնողական աշխատանքի մոդելներ, որոնք թույլ են տալիս իրականացնել երեխայի դաստիարակությունը՝ ձևավորելով նրա անձնային որակները: Այսօր այն դարձել է մի գիտություն, որի մեջ առկա են արվեստի, հոգեբանության, փիլիսոփայության, կիբեռնետիկայի, նաև այլ գիտությունների տարրեր: Այստեղ է, որ մանկավարժական որոնումները դառնում են ինովացիայի կամ նորարարության առիթ: Նորարարությունը բնորոշ է մարդու գործունեության բոլոր ձևերին: Այն նպաստում է այս կամ այն ոլորտի առաջընթացին, զարգացմանը, ավանդականի ու ժամանակակիցի համադրմանը: Ինովացիաներն ինքնին չեն ստեղծվում, դրանք գիտական հետազոտությունների արդյունքներ են, առաջավոր փորձի ներդրումներ<sup>8</sup>: Մանկավարժությունը, որպես

---

<sup>8</sup> Сластенин В. А. и др., Педагогика, Москва, 2003г., стр. 544.

անընդմեջ զարգացում ապրող գիտական դիսցիպլին, նորարարությունների կարիք է զգում իր բոլոր ասպարեզներում, որոնցից ամենահետաքրքրականը, թերևս, դպրոց համակարգն է՝ իր ենթահամակարգերով և ենթակառույցներով: Խոսելով դպրոց համակարգում նորարարական մանկավարժության արդի զարգացումներից՝ պետք է առանձնացնել ուսուցիչների, մանկավարժական կոլեկտիվի աշխատանքը: Նրանց ներդրումների, կուտակած մանկավարժական փորձի ուսումնասիրության արդյունքում ինովացիաները դառնում են մանկավարժական գործընթացի ուղղորդող սլաքներ:

Ինովացիան կամ նորարարությունը բնութագրվում է որպես նորույթի ներմուծում կրթական նպատակի, բովանդակության, մեթոդների և ձևերի մեջ, որը հնարավորություն է տալիս կազմակերպելու ուսուցչի և սովորողի համագործակցային աշխատանքն ավելի մեծ արդյունավետությամբ: Մանկավարժական նորարարական գործընթացն այսօր զարգանում է հիմնականում երկու ուղղություններով՝

- առաջավոր մանկավարժական փորձի ուսումնասիրություն, ընդհանրացում, տարածում,
- հոգեբանամանկավարժական նոր ձեռքբերումների մշակում, փորձարկում, ներմուծում կրթական գործընթացի տարբեր համակարգերի մեջ:

Ոմանք նախապատվությունը տալիս են առաջին ուղղությանը, ոմանք էլ՝ երկրորդին: Ամեն դեպքում՝ նորարարության առարկան, բովանդակությունը, մեխանիզմները պետք է արտացոլեն վերոհիշյալ երկու ուղղությունների փոխկապակցվածությունը, որոնք մինչև օրս դեռևս միավորված չեն: Դրանց օբյեկտիվ փոխկապակցվածությունը դրսևորվում է նրանում, որ մանկավարժական փորձի ուսումնասիրության, ընդհանրացման և տարածման ընթացքի վերջնանպատակն է նորի ներդրումը, առաջավորի զանգվածայնացումը: Այս դեպքում ուսուցիչը կարող է հանդես գալ մանկավարժական նոր տեխնոլոգիաներ փորձարկողի, ուսումնասիրողի, տարածողի, ի վերջո, հեղինակի կարգավիճակում: Նման գործընթացի կառավարումը կարող է ապահովել կրթական այլընտրանքի ձևավորում, որը շատ կարևոր պահանջմունք է մեր օրերում:

Համաձայն պետական կրթական ռազմավարությունը որոշող «ՀՀ կրթության զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագրի»՝ կրթության բնագավառի գերխնդիրներից է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը<sup>9</sup>: Նույն փաստաթղթում կարևորվում է նաև մանկավարժական կրթության և մասնագիտական օժանդակության համակարգի բարելավումը՝ առաջադեմ և ստեղծագործ մանկավարժների բացահայտման,

<sup>9</sup> [www.edu.am](http://www.edu.am), «ՀՀ կրթության զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագիր»:

խրախուսման, զարգացման և բարեփոխումների գործընթացներում նրանց ակտիվ ներգրավման նպատակով: Սրան նպաստում է նաև ՀՀ հանրակրթության մասին օրենքը, որտեղ հատուկ կետով արժևորվում է վերապատրաստված և ատեստավորված ուսուցչի գիտելիքը և փորձառությունը, կատարվում է մանկավարժական ներուժի դասակարգում՝ տարակարգեր շնորհելու միջոցով: Հիշյալ օրենքի 26 հոդվածում՝ «Ուսուցիչը, նրա վերապատրաստումը, ատեստավորումը և տարակարգի շնորհումը: (վերնագիրը խմբ. 06.10.11 ՀՕ-264-Ն), ատեստավորված ուսուցչին տարակարգ շնորհելու մասին կետին հաջորդում է ժամանակակից հետազոտող ուսուցչի բնութագրիչների մասին կետը, համաձայն որի՝ «Ուսուցչի որակավորման տարակարգերի բնութագրիչները սահմանում է կրթության պետական կառավարման մարմինը՝ հիմք ընդունելով ուսուցչի գիտելիքների, մանկավարժական աշխատանքային հմտությունների և ունակությունների ծավալը, ստեղծագործական-հետազոտական գործունեության արդյունավետությունը, մասնագիտական աշխատանքի ստաժը, մանկավարժական գործունեության որակական այլ ցուցանիշներ (ներառյալ՝ պարզևատրույմը, համապատասխան մրցույթներին մասնակցությունը, մասնագիտական կատարելագործմանն ուղղված վերապատրաստումները և այլն)»<sup>10</sup>: Այսպիսով, օրենքով սահմանված բանաձևում առանձնանում է հմուտ ուսուցչի վաստակը, հատուկ կարևորվում է նրա պահանջարկը՝ իր հետազոտությունների, ուսումնադաստիարակչական գործընթացի, բարեփոխման իր տարբերակների առաջարկման, ինտելեկտի և փորձի շնորհիվ:

Այսպիսով՝ ուսուցման գործընթացի մտավոր և տեխնոլոգիական ամբողջ բազմազանությունը գործարկողը ուսուցիչն է, որը, բացի դասավանդողից, վերածվում է խորհրդատուի, ուղղորդողի, դաստիարակի, համախոհի: Նրանից պահանջվում է հոգեբանամանկավարժական բարձրորակ պատրաստվածություն: Այսօր ուսուցչի մասնագիտական գործունեության ընթացքում պահանջվում է օգտագործել ոչ միայն մասնագիտական, առարկայական համապատասխան գիտելիքներ, այլև ժամանակակից ուսումնական և դաստիարակչական տեխնոլոգիաներ: Վերապատրաստման դասընթացները, ատեստավորումը օգնում են ուսուցչին ընդհանրացնել իր կատարած աշխատանքի արդյունքերը և մոտիվացնում են նրան՝ նոր հետազոտություններ կատարելու համար: Երբեմն նորարարական ուղղությունը մանկավարժական գործունեության մեջ որոշում է հասարակության զարգացման, մշակութային և կրթական առաջխաղացման տեմպը: Կրթական համակարգի արմատական փոփոխությունները, ուսումնադաստիարակչական գործընթացի մեթոդաբանական և տեխնիկական հենքի բարեփոխումները ուղղորդում են նորարարական գործընթացները հատկապես առաջնային օղակներ. ձևավորվում է ուսուցչի գործունեության բնույթի, ձևի, բովանդակության նոր մոդելների որոշակի պահանջ: Դպրոցում մանկավարժական

<sup>10</sup> ՀՀ օրենքը Հանրակրթության մասին, գլուխ 5, կետ 31:

գործունեության նորարարական ուղղվածությունը կարող է նպաստել որոշակի նորարարական միջավայր ստեղծելուն, որտեղ սովորողը կհամագործակցի ուսուցչի հետ, իսկ ուսուցիչը կդառնա նրա համախոհը: Ժամանակակից դպրոցը հարուստ է նաև մանկավարժական ավանդույթներով: Սակայն հաճախ բախվում ենք այնպիսի խնդրի, երբ այդ փորձը պահանջարկ չի ձևավորում, քանի որ ուսումնասիրված չէ, և բացակայում են այն նորովի ներկայացնելու ջանքերը, վերլուծությունները: Երբեմն ուսուցիչը նպատակահարմար չի գտնում իր գաղափարը մշակել, հղկել, որովհետև դա ժամանակատար է, մինչդեռ հասկանալի է, որ տարերայնորեն կիրառելով՝ հնարավոր է, որ նորը այդպես էլ վերջնական տեսք չստանա, ի վերջո, մոռացության մատնվի: Այնինչ որոշակի կանոնակարգումից, մեթոդական լուծում ստանալուց հետո՝ ուշադրության արժանացած հնարը գուցե մեթոդական օգնություն լինի նաև այլ ուսուցիչներին: Յնուտ ուսմասվարի կամ առարկայական մեթոդմիավորման նախագահի կողմից կազմակերպվող համապատասխան դասալուծման փոփոխումները կարող են օգտակար լինել նորույթի հայտնաբերման հարցում: Հարկավոր է հաճախակի դարձնել մանկավարժական մշտադիտարկումները, համակարգված դասալուծման քննարկումները, գաղափարների տեսակավորման ու մշակման աշխատանքները, առաջավոր մանկավարժական փորձի ուսումնասիրումը:

Անշուշտ, հասկանալի է, որ այսպիսով հանրակրթության բնագավառում իրականացվող նորարարական ռազմավարության համատեքստում աճում է դպրոցի տնօրենի, որպես ամենակարևոր կրթողակի ղեկավարի դերակատարությունը՝ ուսուցիչների աշխատանքները անմիջականորեն կազմակերպելու, վերահսկելու, ամփոփելու գործառնությունների շնորհիվ: Կրթության բովանդակության մեջ կատարվող անընդհատ փոփոխությունները, նոր առարկաների ներմուծումը պահանջում են որոնել նոր կազմակերպչական ձևեր, ուսուցման տեխնոլոգիաներ<sup>11</sup>: Այս դեպքում էապես աճում է մանկավարժական գիտելիքի կառավարման նշանակությունը տվյալ միջավայրում: Երկար տարիներ ուսումնադաստիարակչական գործընթացի յուրաքանչյուր բաղադրիչի խիստ կանոնակարգումը հանգեցնում էր նրան, որ ուսուցիչը կատարողից «չէր փոխակերպվում» ստեղծագործողի, չկար նոր դասագիրք, ծրագիր, նաև նոր աշխատանքային մեթոդներ ընտրելու հնարավորություն: Այսօր նորարարությունն ընդգրկել է ընտրանքի, հետազոտության, հեղինակային և ստեղծագործական դրսևորումների և մոտեցումների ուղղությունները: Ահա թե ինչու կարևորում են նաև դպրոցի տնօրենի դիրքորոշումը՝ կրթության կառավարման նոր որակներ դրսևորելու, մանկավարժական նորարարության գաղափարակիրներին խրախուսելու հարցում, քանզի կարևոր է ուսումնադաստիարակչական աշխատանքի վերլուծության, գնահատականի, քննարկումների, նորի

<sup>11</sup> Лебедев О. Е., Эффективное управление школой в современных условиях, Санкт-Петербург, 2005г., стр. 82.

նկատմամբ որոշակի հակվածության, պայմանների ստեղծման, ուսուցչին խրախուսելու, նրա առաջարկած նորի վերամշակման և կիրառման հնարավորությունների ապահովումը: Մանկավարժական նորարարության հաջողությունը կբարձրացնի նաև դպրոցի հեղինակությունը, մրցունակ կդարձնի կրթական շուկայում: Այս առումով՝ բարեփոխված, նորին ընդառաջ գնացող հանրակրթություն կառուցելով՝ կարելի է երաշխավորված համարել կրթական մյուս օղակների զարգացման հեռանկարը:

Օգտագործված գրականության ցանկ

1. «ՀՀ կրթության զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագիր»
2. ՀՀ օրենք Հանրակրթության մասին
3. Сластенин В. А. И др., Педагогика, Москва, 2003г.
4. Лебедев О. Е., Эффективное управление школой в современных условиях, Санкт-Петербург, 2005г.
5. Подласый И. П. , Педагогика, книга I, Москва, ВЛАДОС, 2003г.
6. [www.edu.am](http://www.edu.am)
7. [www.amedu.am](http://www.amedu.am)

---

## Օգնություն դիմորդներին

Բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության և միասնական քննությունների վերաբերյալ հարցերին պատասխանում է ԳԹԿ իրավաբանական և անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ Լիլիթ ՄԱՖԱՐՅԱՆԸ

1. Ե՞րբ է կարելի դիմել բուհեր՝ մասնագիտությունների հայտագրման համար:
  - Դիմորդների փաստաթղթերը և մասնագիտությունների հայտագրման համար դիմում-հայտերը բուհերում ընդունվում են մայիսի 5-ից մինչև հունիսի 1-ն (մինչև ժամը 18.00) ընկած ժամանակահատվածում: Դիմորդները բուհեր ընդունելության դիմում-հայտը և փաստաթղթերը հանձնում են այն բուհում, որի մասնագիտությունն ընդունելության դիմում-հայտում հայտագրել են առաջինը:
  - Այն դիմորդները կարող են իրենց փաստաթղթերը և ընդունելության դիմում-հայտերը բուհեր ներկայացնել հունիսի 25-ից մինչև հուլիսի 2-ն ընկած ժամանակահատվածում, որոնք՝
    - երկքաղաքացի կամ օտարերկրացի են և օտարերկրյա ուսումնական հաստատությունը տվյալ տարում են ավարտում,
    - Հայաստանի Հանրապետության քաղաքացի են և օտարերկրյա ուսումնական հաստատությունը տվյալ տարում են ավարտում,
    - գորացրվում են այս տարվա գարնանային գորակոչին,
    - նախնական մասնագիտական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների այս տարվա շրջանավարտ են:
2. Կարո՞ղ է արդյոք դիմորդն ընդունելության դիմում-հայտում փոփոխություն կատարել կամ հետ վերցնել իր դիմում-հայտը:
  - Այո, դիմորդը կարող է ընդունելության դիմում-հայտում փոփոխություն կատարել կամ այն հետ վերցնել՝ մինչև հունիսի 1-ը, ժամը 18.00 (հունիսի 25-ից հուլիսի 2-ին

դիմում հայտ ներկայացրած դիմորդները՝ մինչև հուլիսի 2-ը, ժամը 18.00): Դրա համար դիմորդը դիմում է բուհի ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին՝ ներկայացնելով դիմում-հայտը լրացնելիս նրան տրված ստացականը և քննական թերթիկը:

3. Քանի՞ մասնագիտություն է կարող հայտագրել դիմորդն իր ընդունելության դիմում-հայտում:
  - Դիմորդը կարող է հայտագրել մինչև 2 անվճար և մինչև 8 վճարովի մասնագիտություններ, ընդ որում այդ մասնագիտությունները կարող են լինել մի քանի բուհերում: Հայտագրելով բուհերի մասնագիտությունները՝ դիմորդն այդպիսով հայտ է ներկայացնում ըստ իր հայտագրած մասնագիտությունների հերթականության մասնագիտությունների մրցույթին մասնակցելու վերաբերյալ:
4. Ե՞րբ են հրապարակվում մասնագիտությունների մրցույթների արդյունքները:
  - Մասնագիտությունների մրցույթների արդյունքները հրապարակվում են հուլիսի 15-ին, այսինքն՝ հուլիսի 15-ին դիմորդները համապատասխան բուհերում տեղեկանում են՝ արդյո՞ք ընդունվել են տվյալ բուհ:
5. Ի՞նչ է նշանակում թափուր տեղերի մրցույթ, ովքե՞ր և ե՞րբ կարող են մասնակցել դրան:
  - 2012թ.-ից բուհերի ընդունելության գործընթացում սկսել է կիրառվել թափուր տեղերի մրցույթը: Թափուր տեղերի մրցույթը բուհերի մասնագիտությունների մրցույթի արդյունքում բուհերում թափուր մնացած տեղերի համալրմանն ուղղված մրցույթն է: Այն դիմորդները, ովքեր հուլիսի 15-ին հրապարակված մրցույթից դուրս են մնացել և ունեն դրական միավորներ, կարող են հուլիսի 15-ից 20-ն ընկած ժամանակահատվածում նոր դիմում-հայտ ներկայացնել այն բուհ, որտեղ կան թափուր տեղեր: Հուլիսի 25-ին հրապարակվում են թափուր տեղերի մրցույթների արդյունքները: Այսինքն՝ թափուր տեղերի մրցույթին կարող են մասնակցել միայն այն դիմորդները, ովքեր ունեն դրական միավորներ, դուրս են մնացել հուլիսի 15-ի մրցույթից:
6. Ե՞րբ պետք է ներկայանան միասնական քննություն հանձնող դիմորդները միասնական քննական կենտրոն:



- Միասնական քննություն հանձնող դիմորդները միասնական քննական կենտրոն պետք է ներկայանան միասնական քննությունը սկսվելուց առնվազն մեկ ժամ առաջ: Միասնական քննությունները ամբողջ հանրապետության տարածքում սկսվում են ժամը 9.30-ին, հետևաբար դիմորդները պետք է ներկայանան առնվազն ժամը 8.30-ին: Դիմորդներն իրենց հետ պետք է ունենան անցաթուղթ և անձը հաստատող փաստաթուղթ:
7. Միասնական քննությանը չներկայացած դիմորդները կարո՞ղ են մասնակցել միասնական քննության լրացուցիչ փուլին:
- Այո, միասնական քննությանը հարգելի պատճառով չներկայացած դիմորդը (հարգելի պատճառը պետք է հիմնավորված լինի փաստաթղթով) կարող է հունիսի 24-ից մինչև հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում Գնահատման և թեստավորման կենտրոնում հայտագրել այն առարկան, որից ցանկանում է միասնական քննություն հանձնել: Միասնական քննությունների լրացուցիչ փուլը տեղի է ունենում հուլիս ամսին:
8. Կարո՞ղ է արդյոք միասնական քննության հիմնական փուլին ուշացմամբ ներկայացած և միասնական քննությանը չմասնակցած դիմորդը մասնակցել միասնական քննության լրացուցիչ փուլին:
- Դիմորդի՝ միասնական քննությանը ուշացմամբ ներկայանալու մասին միասնական քննական կենտրոնի ղեկավարը արձանագրություն է կազմում, այն ներկայացնում է բողոքարկման հանձնաժողովին, հանձնաժողովի՝ դիմորդին լրացուցիչ քննությանը մասնակցելու թույլտվության մասին որոշման դեպքում դիմորդը տեղեկացվում է այդ մասին, որից հետո նա հունիսի 24-ից հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում հայտ է ներկայացնում միասնական քննության լրացուցիչ փուլին մասնակցելու համար:
9. Ո՞ր դիմորդները կարող են ՀՀ պետական բյուջեի հաշվին մրցույթից դուրս բուհեր ընդունվել:
- Մրցույթից դուրս և ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կարող են բուհեր ընդունվել ընդունելության քննություններից դրական միավորներ են ստացած հետևյալ դիմորդները.
- ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների երեխաները,
  - ժամկետային զինվորական պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները,

- մրցույթից դուրս և ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կարող են բուհեր ընդունվել վճարովի համակարգի առնվազն անցումային միավորներ հավաքած հետևյալ դիմորդները.
  - առաջին և երկրորդ խմբի հաշմանադամները, մանկուց հաշմանդամ երեխաները՝ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության կողմից տրված եզրակացության հիման վրա,
  - առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան երեխաները:
- ՀՀ պետական բյուջեի հաշվին մրցույթից դուրս բուհեր ընդունվող դիմորդները բուհերի ընդունելության ժամանակ իրենց արտոնությունը հիմնավորող փաստաթղթերը պետք է ներկայացնեն բուհերում մասնագիտությունների դիմում-հայտերը լրացնելիս:

---

**<<Հանրակրթություն. գնահատում և թեստավորում>>  
տեղեկատվական-վերլուծական հանդեսում հոդվածներ  
տպագրելու կարգը**

<<Հանրակրթություն. գնահատում և թեստավորում>> հանդեսը հրատարակում է գնահատման և թեստավորման հիմնախնդիրներին վերաբերող տեսական և կիրառական բնույթի հոդվածներ:

Հոդվածները պետք է ներկայացնել հայերեն (ընդունվում են նաև ռուսերեն և անգլերեն), մեկ օրինակով, համակարգչային շարվածքով (Microsoft Word ծրագրով, Arial Armenian տառատեսակով և 12 տառաչափով):

Հոդվածի ծավալը չպետք է գերազանցի 15 էջը:

Օգտագործված գրականության հղումները հոդվածի տեքստում տրվում են քառակուսի փակագծերում, եթե մեջբերում է կատարվում, ապա նշվում է նաև համապատասխան էջը, օրինակ՝ [12, էջ 23]: Գրականության ցանկը բերվում է հոդվածի վերջում:

Խմբագրություն ներկայացված նյութերը գրախոսվում են:

Խմբագրությունը հրատարակվող հոդվածների բնագրերը հեղինակներին չի վերադարձնում:

Յուրաքանչյուր հեղինակ խմբագրությունից անվճար կարող է ստանալ ամսագրի 2 օրինակ:

<<Հանրակրթություն. գնահատում և թեստավորում>> հանդեսի նյութերն օգտագործելիս հոդվածագիրը պարտավոր է տալ համապատասխան հղումներ:

Դպրոցներին անվճար առաքվում է մեկ օրինակ, որը պետք է պարտադիր գրանցվի դպրոցական գրադարաններում:

---

Իրավական-  
նորմատիվային  
փաստաթղթեր



Հավելված ՀՀ կառավարության 2012թ. Նոյեմբերի 29-ի N1516-ն որոշման

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2013/2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԳՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՏԵՂԵՐԻ ԵՎ ՈՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՈՒՄԵՐԻ

Ծածկահարկը	Բուհ, մասնագիտություն	Ընդունելության քննությունները					Ընդունելության տեղ/այդ թվում			ուսման վարձը հազ. դ	
		մրցութային			ոչ մրցութային		անվճար	այդ թվում պլ. նստ.	վճարովի US		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
01	Երևանի պետական համալսարան						338	37		2870	
001	Մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ(գ)			Հ(գ(գ)*)	19	2		60	400
002	Մեխանիկա	Մ(գ)	Ֆ(գ)			Հ(գ(գ)*)	7	1		25	400
003	Ալտուրական և ֆինանսական մաթեմատիկա	Մ(գ)	Հ(գ(գ))	Օտլ(գ)			5	1		95	450
004	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ(գ) կամ Անգ(գ)			Հ(գ(գ)*)	31	3		160	500
005	Մաթեմատիկա: Համակարգչային գիտություններ	Մ(գ)	Ֆ(գ) կամ Անգ(գ)			Հ(գ(գ)*)	10	1		35	500
006	Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա	Ֆ(գ)	Մ(գ)			Հ(գ(գ)*)	3			15	400
007	Ֆիզիկա	Ֆ(գ)	Մ(գ)			Հ(գ(գ)*)	19	2		50	400
008	Միջուկային ռեակտորների ֆիզիկա	Ֆ(գ)	Մ(գ)			Հ(գ(գ)*)	20	2		10	400
009	Ռադիոֆիզիկա և էլեկտրոնիկա	Ֆ(գ)	Մ(գ)			Հ(գ(գ)*)	20	2		50	400
010	Կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա	Ֆ(գ)	Մ(գ)			Հ(գ(գ)*)	7			15	400
011	Հեռահաղորդակցություն և ազդանշանների մշակում	Ֆ(գ)	Մ(գ)			Հ(գ(գ)*)	3			16	400
012	Քիմիա	Ք(գ)	Կ(գ)** կամ Ֆ(գ)**			Հ(գ(գ)*)	8	1		30	400
013	Էկոլոգիական քիմիա	Ք(գ)	Կ(գ)** կամ Ֆ(գ)**			Հ(գ(գ)*)	4			30	400
014	Դեղագիտություն	Ք(գ)	Կ(գ) կամ Ֆ(գ)			Հ(գ(գ)*)	5	1		60	500
015	Կենսաբանություն	Կ(գ)	Ք(գ) կամ Ֆ(գ)			Հ(գ(գ)*)	7	1		40	400

Ծածկահարկը	Բուհ, մասնագիտություն	Ընդունելության քննությունները					Ընդունելության տեղ/այդ թվում			ուսման վարձը հազ. դ	
		մրցութային			ոչ մրցութային		անվճար	այդ թվում պլ. նստ.	վճարովի US		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
01	Երևանի պետական համալսարան						338	37		2870	
016	Կենսաֆիզիկա	Կ(գ)	Ք(գ)** կամ Ֆ(գ)**			Հ(գ(գ)*)	4			30	400
017	Կենսաքիմիա	Կ(գ)	Ք(գ) կամ Ֆ(գ)			Հ(գ(գ)*)	4			30	400
018	Կենսաինֆորմատիկա	Կ(գ)	Մ(գ)	Ֆ(գ)		Հ(գ(գ)*)	3			15	400
019	Երկրաբանություն	Մ(գ)	Ֆ(գ)**			Հ(գ(գ)*)	7	1		50	400
020	Աշխարհագրություն	Ա(գ)	Մ(գ)**			Հ(գ(գ)*)	5	1		50	400
021	Ֆրազեոլոգիա	Ա(գ)	Մ(գ)**			Հ(գ(գ)*)	2			15	400
022	Թարգմանաբանություն և կադաստրային գործ	Ա(գ)	Մ(գ)			Հ(գ(գ)*)	2			30	400
023	Մեքվիս	Ա(գ) կամ ՀԺՊ(գ)	Հ(գ(գ))	Օտլ(գ)			2	1		50	450
024	Պատմություն	ՀԺՊ(գ)	Օտլ(գ) կամ ԸՊ(գ)	Հ(գ(գ))			8	1		65	400
025	Մշակութաբանություն	ՀԺՊ(գ)	Հ(գ(գ))	Օտլ(գ)			3			55	400
026	Արվեստաբանություն	ՀԺՊ(գ)	Հ(գ(գ))	Օտլ(գ)			5	1		55	400
027	Թարգմանաբանություն	ՀԺՊ(գ)	Հ(գ(գ))	Օտլ(գ)			5	1		70	550
028	Միջազգային հարաբերություններ	ՀԺՊ(գ)	Հ(գ(գ))	Օտլ(գ)						100	600
029	Հանրային կառավարում	ՀԺՊ(գ)	Հ(գ(գ))	Օտլ(գ)			3	1		65	600
030	Տնտեսագիտության տեսություն	Մ(գ)	Հ(գ(գ))	Օտլ(գ)			5	1		150	600
031	Կառավարում	Մ(գ)	Հ(գ(գ))	Օտլ(գ)			2			55	600
032	Փիլիսոփայություն	Հ(գ(գ))	Օտլ(գ)			ՀԺՊ(գ)*	5	1		35	400
033	Հոգեբանություն	Կ(գ)	Հ(գ(գ))	Օտլ(գ)			5	1		60	500
034	Սոցիալական աշխատանք	Հ(գ(գ))	Օտլ(գ)			Մ(գ)*	3			40	450

Օձակագիրը	Բուիչ, մասնագիտությունը	Ընդունելության քննությունները					Ընդունելության տեղ/այդ թվում			ուսման վարձը հազ. դ	
		մրցութային			ոչ մրցութային		անվճար	այդ թվում			վճարովի US
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
01	Երևանի պետական համալսարան						338	37		2870	
035	Սոցիոլոգիա	Մ(գ)	Հ(գ(գ))	Օտլ(գ)			5	1		55	450
036	Հայոց լեզու և գրականություն	Հ(գ(բ))	Հ(գ(գ))	Օտլ(գ) կամ ՀԺՊ(գ)			18	2		110	400
037	Սոցիալական մանկավարժություն	Հ(գ(գ))	Օտլ(գ)			Մ(գ)*	2			35	400
038	Լրագրություն	Հ(գ(գ))	ՄԱ(գ)	ԲՀՄ(բ)			5	1		60	400
039	Լեզվաբանություն և միջնադարյան հայրորդակցություն, ոտասց լեզու	Ռ(գ)	Հ(գ(գ))	Օտլ(գ)			3			30	400
040	Թարգմանչական գործ՝ ոտասց և հայերեն լեզուներ	Ռ(գ)	Հ(գ(գ))	Օտլ(գ)			2			13	400
041	Ռոտասց լեզու և գրականություն	Ռ(գ(բ))	Ռ(գ)	Հ(գ(գ))			6	1		40	400
042	Լեզվաբանություն և միջնադարյան հայրորդակցություն,անգլերեն	Մնգ(բ)	Մնգ(գ)	Հ(գ(գ))			3			50	550
043	Մնգլերեն լեզու և գրականություն	Մնգ(բ)	Մնգ(գ)	Հ(գ(գ))			5	1		130	550
044	Ֆրանսերեն լեզու և գրականություն	Ֆր(բ)	Ֆր(գ)	Հ(գ(գ))			2			28	500
045	Գերմաներեն լեզու և գրականություն	Գ(բ) կամ Մնգ(բ)	Գ(գ) կամ Մնգ(գ)	Հ(գ(գ))			2			28	500
046	Րուսերեն լեզու և գրականություն	Օտլ(բ)	Օտլ(գ)	Հ(գ(գ))			2			45	550
047	Խտալերեն լեզու և գրականություն	Օտլ(բ)	Օտլ(գ)	Հ(գ(գ))			2			15	550
048	Հոտարեն լեզու և գրականություն	Ռ(գ)	Հ(գ(գ))	Օտլ(գ)			3			20	400
049	Թարգմանչական գործ՝ անգլերեն և հայերեն լեզուներ	Մնգ(բ)	Մնգ(գ)	Հ(գ(գ))			3			50	550
050	Թարգմանչական գործ՝ գերմաներեն և հայերեն լեզուներ	Գ(բ)	Գ(գ)	Հ(գ(գ))			2			15	500
051	Թարգմանչական գործ՝ ֆրանսերեն և հայերեն լեզուներ	Ֆր(բ)	Ֆր(գ)	Հ(գ(գ))			2			15	500
052	Թարգմանչական գործ՝ իտալերեն և հայերեն լեզուներ	Օտլ(բ)	Օտլ(գ)	Հ(գ(գ))			2			15	550
053	Կովկասագիտություն	ՀԺՊ(գ)	Հ(գ(գ))	Օտլ(գ)			5	1		55	400

Օձակագիրը	Բուիչ, մասնագիտությունը	Ընդունելության քննությունները					Ընդունելության տեղ/այդ թվում			ուսման վարձը հազ. դ	
		մրցութային			ոչ մրցութային		անվճար	այդ թվում			վճարովի US
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
01	Երևանի պետական համալսարան						338	37		2870	
054	Արաբագիտություն	Հ(գ(գ))	ՀԺՊ(գ)	Օտլ(գ)			5	1		40	550
055	Դրանագիտություն	Հ(գ(գ))	ՀԺՊ(գ)	Օտլ(գ)			5	1		40	550
056	Թուրքագիտություն	Հ(գ(գ))	ՀԺՊ(գ)	Օտլ(գ)			5	1		40	550
057	Դրավագիտություն	Հ(գ(գ))	ՀԺՊ(գ)	Օտլ(գ)						130	800
058	Ատվածաբանություն	ՀԺՊ(գ)	Հ(գ(գ))			Օտլ(գ)*	4			60	400
059	Եվրոպացիություն	ՀԺՊ(գ)	Հ(գ(գ))			Օտլ(գ)*	4			40	400

/ «Կենսաինֆորմատիկա» մասնագիտության դիմորդներին իրավունք է վերապահվում իրենց ընտրությամբ հասնել նշված երեք՝ «Կենսաբանություն», «Մաթեմատիկա» և «Ֆիզիկա» քննություններից երկուսը/

Օտ-կազմի թիվը	Բուժը, մասնագիտությունը	Ընդունելության քանակությունները					Ընդունելության տեղ/այդ թվում			ուսման վարձը հազ. դ	
		մրցութային			ոչ մրցութային		անվճար	այդ թվում թգ նպատ.	վճարովի US		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
02	<b>ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ</b>						41	6		286	
060	Խնկորմատիկա և կիրառական մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ(գ)**			Հ(գ(գ)*)	4	1		30	350
061	Էկոլոգիական քիմիա	Ք(գ) կամ Կ(գ)	Ֆ(գ)**			Հ(գ(գ)*)	3			25	280
062	Պատմություն	ՀԺՊ(գ)	Օտլ(գ) կամ ԸՊ(գ)	Հ(գ(գ))			5	1		40	300
063	Մասնավարժություն և հոգեբանություն	Հ(գ(գ))	ՀԺՊ(գ)	Օտլ(գ)**			4	1		30	300
064	Հայոց լեզու և գրականություն	Հ(գ(բ))	Հ(գ(գ))	Օտլ(գ)** կամ ՀԺՊ(գ)**			5	1		25	280
065	Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(բ)	Անգլ(գ)	Հ(գ(գ))			3			25	350
066	Ֆրանսերեն լեզու և գրականություն	Ֆրլ(բ)	Ֆրլ(գ)	Հ(գ(գ))			3			15	350
067	Կիրառական արվեստ	Գծն	ԳԿ	Կոմ		Հ(գ(գ)*)	5	1		30	300
068	Տնտեսագիտության տեսություն	Մ(գ)	Հ(գ(գ))	Օտլ(գ)			5	1		40	400
069	Սերվիս	Ա(գ) կամ ՀԺՊ(գ)	Հ(գ(գ))	Օտլ(գ)			4			26	320

Օտ-կազմի թիվը	Բուժը, մասնագիտությունը	Ընդունելության քանակությունները					Ընդունելության տեղ/այդ թվում			ուսման վարձը հազ. դ	
		մրցութային			ոչ մրցութային		անվճար	այդ թվում թգ նպատ.	վճարովի US		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
03	<b>Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան Երևանի կրթահամալիր)</b>						265	22		1365	
070	<b>Քիմիական տեխնոլոգիաների և բնագիտական ճարտարագիտության ֆակուլտետ</b>						16*2*	1		111	
	Կենսատեխնոլոգիա	Մ(գ)	Ք(գ)** կամ Ֆ(գ)**			Հ(գ(գ)*) Օտլ(գ)*	4			20	402
	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (քիմիական արդյունաբերության ճյուղում)	Մ(գ)	Ք(գ)** կամ Ֆ(գ)**			Հ(գ(գ)*) Օտլ(գ)*	0+2*			28	522
	Շրջակա միջավայրի պաշտպանություն(քիմիական արդյունաբերության ճյուղում)	Մ(գ)	Ք(գ)** կամ Ֆ(գ)**			Հ(գ(գ)*) Օտլ(գ)*	2			23	402
	Սննդամթերքի տեխնոլոգիա	Մ(գ)	Ք(գ)** կամ Ֆ(գ)**			Հ(գ(գ)*) Օտլ(գ)*	3			22	402
	Քիմիական տեխնոլոգիաներ	Մ(գ)	Ք(գ)** կամ Ֆ(գ)**			Հ(գ(գ)*) Օտլ(գ)*	7	1		18	402
071	<b>Էներգետիկայի ֆակուլտետ</b>						33*2*	2		170	
	Ատոմային էլեկտրական կայաններ և տեղակայանքներ	Մ(գ)	Ֆ(գ)**			Հ(գ(գ)*) Օտլ(գ)*	7			18	420
	Էլեկտրաէներգետիկա	Մ(գ)	Ֆ(գ)**			Հ(գ(գ)*) Օտլ(գ)*	7	1		43	420
	Էներգաարդյունավետ տեխնոլոգիաներ և էներգետիկական մենեջմենթ	Մ(գ)	Ֆ(գ)**			Հ(գ(գ)*) Օտլ(գ)*	3			22	522
	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (էներգետիկայի ճյուղում)	Մ(գ)	Ֆ(գ)**			Հ(գ(գ)*) Օտլ(գ)*	0+2*			28	522
	Շրջակա միջավայրի պաշտպանություն (էներգետիկայի ճյուղում)	Մ(գ)	Ֆ(գ)**			Հ(գ(գ)*) Օտլ(գ)*	2			23	402
	Ջերմաէներգետիկա	Մ(գ)	Ֆ(գ)**			Հ(գ(գ)*) Օտլ(գ)*	7	1		18	420
	Տեխնոլոգիական գործընթացների (պրոցեսների) և արտադրության ավտոմատացում (ատոմային էներգետիկայի ճյուղում)	Մ(գ)	Ֆ(գ)**			Հ(գ(գ)*) Օտլ(գ)*	7			18	420
072	<b>Էլեկտրատեխնիկական ֆակուլտետ</b>						19	2		57	
	Էլեկտրատեխնիկա, էլեկտրամեխանիկա և էլեկտրատեխնոլոգիաներ	Մ(գ)	Ֆ(գ)**			Հ(գ(գ)*) Օտլ(գ)*	19	2		57	420

Տածակագիրը	Բուիչ, մասնագիտությունը	Ընդունելության քննությունները					Ընդունելության տեղ/այլ թվում				ուսման վարձը հազ. դ
		մրցութային			ոչ մրցութային		անվճար	այլ թվում	վճարովի US		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
03	<b>Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (Երևանի կրթահամալիր)</b>						265	22		1365	
073	<b>Մեխանիկամեքենագիտական ֆակուլտետ</b>						9			64	
	Կիրառական մեխանիկա	Մ(զ)	Ֆ(զ)**		Հ(զ(զ)*)	Օտլ(զ)*	3			21	420
	Հրատարակչական գործ և պրիդրաֆիա	Մ(զ)	Ֆ(զ)**		Հ(զ(զ)*)	Օտլ(զ)*	3			21	420
	Սարքաշինություն	Մ(զ)	Ֆ(զ)**		Հ(զ(զ)*)	Օտլ(զ)*	3			22	420
074	<b>Մեքենաշինության ֆակուլտետ</b>						15+2*	2		63	
	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (մեքենաշինության ճյուղում)	Մ(զ)	Ֆ(զ)**		Հ(զ(զ)*)	Օտլ(զ)*	0+2*			28	522
	Մեքենաշինություն և նյութերի մշակում	Մ(զ)	Ֆ(զ)**		Հ(զ(զ)*)	Օտլ(զ)*	7	1		18	402
	Տեխնոլոգիական մեքենաներ և սարքավորումներ	Մ(զ)	Ֆ(զ)**		Հ(զ(զ)*)	Օտլ(զ)*	8	1		17	402
075	<b>Տրանսպորտային համակարգերի ֆակուլտետ</b>						10+2*	2		128	
	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (տրանսպորտի ճյուղում)	Մ(զ)	Ֆ(զ)**		Հ(զ(զ)*)	Օտլ(զ)*	0+2*			28	522
	Տրանսպորտային ուղիների, միջոցների շինարարություն, կառավարում և որակը չափադրծում	Մ(զ)	Ֆ(զ)**		Հ(զ(զ)*)	Օտլ(զ)*	7	1		60	420
	Փոխարդյունների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում	Մ(զ)	Ֆ(զ)**		Հ(զ(զ)*)	Օտլ(զ)*	3	1		40	420
076	<b>Ռադիոտեխնիկայի և կապի համակարգերի ֆակուլտետ</b>						24+2*	3		131	
	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (կապի ճյուղում)	Մ(զ)	Ֆ(զ)		Հ(զ(զ)*)	Օտլ(զ)*	0+2*			28	522
